«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

| | |
|---|---|
| ԹԵՄԱ | Քառաբաժան աղյուսակը՝ որպեսքննադատական մտածողության եվ գնահատողական կարողությունների զարգացման միջոց |
| ԱՌԱՐԿԱ | Հայոց լեզու և գրականություն |
| ՀԵՂԻՆԱԿ | Կառմեն Ահարոնյան |
| ՄԱՐԶ | Արմավիր |
| ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | Վաղարշապատի Գր. Նարեկացու անվան N 2 ավագ դպրոց |

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ 3

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 4

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ 8

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 17

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 25

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 26

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 28

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 29

# ՆԱԽԱԲԱՆ

Գլոբալիզացիայի պայմաններում ժամանակակից մանկավարժությունը միտված է կրթական բարեփոխումների միջոցով համակարգը համապատասխանեցնել արդի պահանջներին ու կրթական չափանիշներին: Մարդկությանն անհրաժեշտ է այնպիսի կրթություն, որը հասարակության յուրաքանչյուր անդամին հնարավորություն կտա զարգացող ու փոփոխվող աշխարհում քայլել ժամանակին համընթաց, պասսիվ ունկնդրողից դառնալ կրթության գործընթացի ակտիվ մասնակիցը:

Այսպիսի կրթության ապահովման համար անհրաժեշտ է դպրոցում ներդնել և զարգացնել ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնց թվում կարևոր տեղ ունի քննադատական մտածողությունը (այսուհետ ՔՄ) զարգացնող տեխնոլոգիան:

ՔՄ շնորհիվ սովորողները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, ցուցաբերում են ակտիվություն, ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ, նրանք հաճույքով են սովորում, հետաքրքրվում են ուսումնական նյութով, այն յուրացնում առավել խորությամբ՝ վերլուծելու, համադրելու, ընդհանրացնելու, ինքնուրույն որոշումներ, եզրակացություններ կատարելու միջոցով: ՔՄ-ը խորապես զարգացնում է նաև աշակերտների գնահատողական կարողությունները: Այսպիսի կարողություններով օժտված մարդը հեշտությամբ կկարողանա կյանքում գտնել իր տեղը՝ դառնալով հասարակության ակտիվ անդամ:

Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ընթանում է ամբողջ ուսումնական պրոցեսի և կյանքի ընթացքում:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՔՄ ունի պատմական արմատներ, հիմքում ընկած է հույն փիլիսոփա Սոկրատեսի հարցադրումների մեթոդը, որի ժամանակ չէին հաղորդվում պատրաստի գիտելիքներ, սովորողին հնարավորություն էր տրվում ինքնուրույն գալ ճիշտ եզրահանգման: Միևնույն ժամանակ ՔՄ նոր մոտեցում է, ընկալվում է որպես ակտիվ ուսուցման բաղադրիչ, աշակերտին ուսումնական գործընթացին ակտիվ մասնակից դարձնելու հայեցակարգային հիմք:

ՔՄ զարգացման խնդիրներին անդրադարձել են 20-րդ դարի վերջերին, այն առավել հայտնի է «ՔՄ զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի շրջանակներում, որի համար ստեղծվել են ուղեցույցներ /1-8, 1998թ./:

Անգլալեզու գրականության մեջ, ՔՄ /critical thinking/ ասելով, հասկանում են շրջապատող ամեն ինչի մասին մարդու կշռադատելու ունակությունը: Նույն ելակետից է բխում նաև ռուս մանկավարժներ Ի.Օ.Զագաշնի, Ս.Ի.Զաիր-Բեկի տեսական մոտեցումը: Նրանց կարծիքով ՔՄ ունեցողները կարողանում են ինքնուրույն լուծել առաջադրվող խնդիրը, ստեղծել նոր հնարավորություններ, մտածել՝ «Ի՞նչ հարաբերության մեջ է այդ ամենն իմ իմացածի հետ», «Այս գիտելիքները հաստատվու՞մ են փաստերով», «Ինչպե՞ս կարող եմ օգտագործել այս տեղեկատվությունը և այլն» (А.Робер. с 16): ՔՄ դեռևս 5-6-րդ դարերում գնահատվել է հայ ականավոր իմաստասեր Դավիթ Անհաղթի կողմից, ով ավելի խորը ու համապարփակ է ներկայացրել ՔՄ դերը ուսուցման մեջ: Կարևորելով սովորողի ինքնուրույնությունը, քննադատական, տրամաբանական մտածողությունը՝ նա գտնում է, որ ՔՄ շնորհիվ է մարդը գնում դեպի աշխարհաճանաչում:

ՔՄ տերմինը առաջին հայացքից բացասական երանգ ունի և նույնացվում է «քննադատել» բառի հետ: Սակայն բառը ստուգաբանվում է որպես «քննել» և «դատել» արմատների միավորում, այսինքն` հարցը քննել, ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից և դատել, եզրահանգում անել, կարծիք հայտնել ու հիմնավորել:

ՔՄ բնորոշ են մտքի ճկունությունը, կշռադատելու կարողությունն ու սեփական ընտրության համար պատասխանատվությունը:

Աշխարհի բազմաբարդ դառնալուն և ժողովրդավարության տարածվելուն զուգընթաց ակնհայտ է դառնում, որ աճող սերնդից պահանջվում է բարդ խնդիրներ լուծելու, հանգամանքները քննախույզ դիտարկելու, այլընտրանքային կարծիքները քննելու, խելացի որոշումներ կայացնելու կարողություն: Այդ սերնդից պահանջվում է տիրապետել քննադատաբար մտածելու անհրաժեշտ հմտության, որ կարող է ձևավորվել և զարգանալ ուսումնական բարենպաստ միջավայրում:

ՔՄ տեսության մոտեցումները տարբեր բովանդակութուն են ունեցել: Ի.Վ. Դուբրովինան գրում է. «Մտածողությունը ըստ վերահսկման ազդեցության կարող է լինել քննադատական կամ ոչ քննադատական» (И.Б.Дубровина и др. 1999 с.15): Ըստ Ա. Ռոբերի՝ «Կոգնիտիվ (իմացական, ճանաչողական) ստրատեգիա է, որը բաղկացած է որոշակի աշխատանքի իրականացման, խնդրի հնարավոր լուծումների անընդհատ ստուգումներից և փորձարկումներից>> (А.Робер. 2000, с128): Ոմանք ՔՄ նույնացրել են ստեղծագործական մտածողության հետ, ոմանք՝ հակադրել: Իրականում դրանք ունեն և՛ նմանություններ, և՛ տարբերություններ: Երկուսն էլ դուրս են բոլորի կողմից ընդունված սովորական կաղապարներից, իսկ տարբերություն այն է, որ ստեղծագործական մտածողությունը հանգեցնում է նոր բացահայտումների, իսկ ՔՄ գոյություն ունեցող գաղափարներում և լուծումներում կատարում է թերությունների կամ սխալների ստուգման գործառույթ (А.Робер. 2000):

ՔՄ շատ ընդհանրություններ ունի նաև աշակերտների ինքնուրույն մտածողության և ակտիվության հետ: ՔՄ տեսություններում անփոփոխ է ՔՄ հիմնական նպատակը՝ աշակերտին դարձնել ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից, գիտելիքներ մատուցողի և վերարտադրողի դերը փոխարինել ակտիվ ուսումնական և որոնողական աշխատանք կատարողի դերով, սովորել սովորեցնել, ի հայտ բերել և զարգացնել նրանց ներքին հնարավորությունները, ինքնուրույն, ստեղծագործական մտածողությունը:[1]

ՔՄ զարգացման համար ուսուցումը պետք է դառնա աշակերտակենտրոն գործընթաց. սա հենց այն կարևոր նախապայմանն է, որով այն տարբերվում է ավանդական ուսուցումից: Ավանդականի դեպքում ուսուցումն ուներ երկու կողմ՝ սուբյեկտը՝ ուսուցիչը, և օբյեկտը՝ աշակերտը: Ժամանակակից մանկավարժությունը այս գործընթացը դիտարկում է որպես ամբողջություն, որտեղ գործում են ուսուցման երկու սուբյեկտ՝ ուսուցիչը և աշակերտը[2]: Ուսուցման գործընթացի գլխավոր

---

[1] ՔՄ զարգացման մոտեցումներից մեկը, որի հեղինակներն են ամերիկացի մանկավարժներ Ջինի Լ.Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը և Չարլզ Թեմփլը, մեզ ծանոթ են Բաց հասարակության ինստիտուտի կողմից ֆինանսավորված և «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի կազմակերպած վերապատրաստման դասընթացների շնորհիվ:

[2] «Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառումը կրտսեր դպրոցում և ՔՄ զարգացումը կրտսեր դպրոցում՝ հատուկ սեմինար-դասընթացի նյութեր». Երևան 2002:

ղերակատարը աշակերտն է, և ուսուցիչը դադարում է աշակերտների գիտելիքների միակ աղբյուրը լինելուց, դառնում է նրանց ուսումնառության գործընթացի ղեկավարը, հետազոտող, որոնող, ինչը խթանում է նաև աշակերտներին, իր օրինակով ցույց տալիս ինքնուրույն, ստեղծագործական գաղափարը ուսումնական աշխատանքի մեջ ներդնելու հետաքրքրությունը:

ՔՄ զարգացման արդյունավետության մեջ խիստ կարևոր է քննադատաբար մտածող ուսուցչի դերը, ով համապատասխան գիտելիքներ, կարողություններ ու հմտություններ պետք է ունենա: «Կրթության փիլիսոփայություն» ուսումնական ձեռնարկում նշվում է. կրթական բարեփոխումների արդյունքը մեծապես կախված է այն բանից, թե ինչ են մտածում և անում ուսուցիչները (Խաչատրյան, 2009, էջ11): Ուսուցիչը պետք է օգնի աշակերտին գտնելու փոխադարձ կապ ստացած գիտելիքի և կենսափորձի միջև, որպեսզի գիտելիքը կապվի կյանքի հետ:

Կարևոր է բուհում ՔՄ զարգացմանն ուղղված դասընթացների առկայությունը, ինչն անմիջական ազդեցություն է ունենալու ուսուցիչների աշխատանքի որակի վրա: Ուսուցիչը պետք է գիտակցի աշակերտների ՔՄ զարգացման անհրաժեշտությունը՝ նրանց ընդգրկելով քննարկումների, ակտիվ քննադատական ուսուցման մեջ, պիտի կարողանա պլանավորել, կազմակերպել ու վերահսկել իրականացվող աշխատանքները, ընտրել ու հետաքրքիր մատուցել նյութը՝ խթանելով աշակերտների ուսումնաճանաչողական ակտիվությունն ու հետաքրքրությունը: Նրան ավելի շատ պետք է հետաքրքրի ոչ միայն աշակերտը նյութի գիտի, թե ոչ, այլ նաև. «աշակերտի վերաբերմունքը ուսումնական գործունեությանը, ճանաչողական գործունեության մեջ երեխայի ինքնաիրացումն ու ցանկալիին հասնելու ձգտումը» (Сальникова 2010, с 93):

Ուսուցիչը պետք է կարողանա գնահատել երեխայի անձը, մարդասիրական մոտեցում ցուցաբերել, ստեղծել պայմաններ երեխայի հոգևոր և ֆիզիկական առողջության համար: Նա իր դրոշմն է դնում աշակերտների հետագա կյանքի կազմակերպման վրա, ուստի կրթությունը պետք է վստահել գիտակ, ամենատաղանդավոր ու ամենապատասխանատու ուսուցչին:

Մանկավարժության նորույթներին ուսուցիչները հաճախ ծանոթանում են վերապատրաստումների ընթացքում: Սակայն նրանք պետք է աշխատեն իրենց մասնագիտական զարգացման վրա: Առաջին հերթին փոփոխություններ պիտի լինեն հենց ուսուցիչների գիտակցության, նրանց արժեքային համակարգի մեջ

(Кузнецова2001 с 21), որն էլ իր հերթին փոփոխություններ կմտցնի մանկավարժական գործընթացի կազմակերպման մեջ: Ուսուցիչը պետք է. «խորապես ճանաչի ժամանակակից և սպասվող կյանքը, որպեսզի դրան նախապատրաստի իր աշակերտներին» (Մանուկյան 2002, էջ456):

ՔՄ տեխնոլոգիայի կիրառությունը ուղղված է ոչ միայն աշակերտների ակտիվ մասնակցությանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանը, այլ նաև նպաստում է ուսուցչի մասնագիտական ինքնազարգացմանը: Լայն հնարավորություն է տրվում ուսումնասիրվող նյութի, առաջադրված խնդիրներին համապատասխան մեթոդների ճիշտ ընտրություն կատարել, ստեղծագործել, հորինել նոր մեթոդներ ու աշխատանքի կազմակերպման նոր ձևեր՝ ապահովելով մասնագիտական աճ:

Ուսուցիչը պետք է աշխատի ստեղծագործաբար, խրախուսի երեխաների հարցադրումները, խթանի աշակերտների ինքնուրույն մտածողությունը, ձևավորի և զարգացնի նրանց մտավոր կարողութունները:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

2009 թվականից մեր հանրապետությունը թևակոխել է կրթության նոր փուլ՝ թե՛ որակական, թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային տեսակետից:

Ավագ դպրոցում սովորողների ՔՄ բացը առավել ցայտուն զգացվեց, երբ անցանք գրավոր աշխատանքների թեստային ձևին: Սկզբնական ոգևորությունը, թե աշակերտները ստանալով ակադեմիական գիտելիքներ, կընտրեն պատրաստի տրված թեստի ճիշտ պատասխանները՝ ապահովելով բարձր արդյունք, խաբուսիկ տպավորություն էր: Թեստեր կազմելու պատասխանատու գործը մեծ պրոֆեսիոնալիզմ է պահանջում. այն հանձնելով ուսուցիչներին և չվերահսկելով թեստերի որակն ու արդյունավետությունը՝ մենք կանգնեցինք հակառակ ծայրահեղության առաջ: Արհեստականորեն բարձրացան թեմատիկ, կիսամյակային գնահատականները, բայց որակական առաջընթաց չարձանագրվեց: Միասնական

քննություններից 20 ստացած աշակերտները 2 և 1 էին ստանում թելադրությունից և շարադրությունից:

Խնդիրն ավելի մտահոգիչ դարձավ, երբ գործածության մեջ դրվեցին պետական չափորոշիչներին համապատասխան թեմատիկ և կիսամյակային գրավոր աշխատանքների տետրերը՝ հաստատված ԿԳ նախարարության կողմից: Մի կողմ թողնելով այն, թե որքանով են հաջողված թեստ-տետրերը, ուզում եմ անդրադառնալ իմ դիտարկմանը, որն էլ դարձավ հետազոտության շարժառիթը:

11-րդ դասարանի հայ գրականության թեստերը կազմված են 30-40 միավորանոց առաջադրանքներից, որը, բաժանելով 3-ի կամ 4-ի, կստացվի 10 բալ: Թեստերում կան ընտրովի, կարճ և երկար պատասխաններով հարցեր՝ համապատասխան միավորներով: Վերջին երկու հարցը՝ 10 բալ՝ 5+5, 4+6 հարաբերակցությամբ, պահանջում են կարճ շարադրանք՝ «Ձևակերպի՛ր վերաբերմունքդ...», «Գրի՛ր դրդապատճառների մասին քո կարծիքը», «Գրի՛ր հերոսին արդարացնող և մերժող փաստարկներ», «Որքանո՞վ է արդիական տվյալ կերպարը», «Գտի՛ր ընդհանրությունները, տարբերությունները», «Վերլուծի՛ր...», «Հիմնավորի՛ր», «Դու քեզ համարու՞մ ես...» և այլն: Պատասխանները ենթադրում են ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մոտեցում, վերլուծական, գնահատողական վերաբերմունք:

Այս հարցերին պատասխանում էին երկու, երեք աշակերտ՝ 20-25 հոգանոց դասարանից. պատասխանները գրքային էին, լիարժեք և ինքնուրույն չէին: Մյուս առաջադրանքներից հավաքում էին 8-8,5 միավոր: 8,5-ը կլորացվում է 9, թվում է, թե ամեն ինչ կարգին է, դասարանի մեկ երրորդը ստացել է 8 և 9, ինչը լավ արդյունք է: Բայց ես սկսեցի ուշադրություն դարձնել ինձ մտահոգող այս երևույթին: Որոշ աշակերտներ ընդհանրապես չէին լրացնում այդ հարցերի էջը: Հավաքեցի թեստերի արդյունքները որպես վկայություններ և պահեցի թղթապանակում:

Հաջորդ տարի կրկնվեց նույնը: Այս մասին խոսեցի գործընկերներիս հետ: Նույն վիճակն է նաև նրանց մոտ: Մտահոգիչ էր, որ ոչ միայն չի զարգանում աշակերտների ինքնուրույն, քննադատական մտածողությունը, գնահատողական

կարողությունները, այլ գնալով թուլանում է՝ տեղը զիջելով գրքային կրկնություններին կամ ոչնչի: Պատճառը նաև այն էր, որ դպրոցական ծրագրերում պակասել էին շարադրությունները, փոխադրությունները՝ տեղը զիջելով թեստերին: Հասկացանք, որ ունենք աշակերտների ՔՄ զարգացնելու լուրջ խնդիր: Այդ խնդիրը նկատվում էր հատկապես 11 ի 1 դասարանի մի քանի աշակերտի մոտ, ովքեր 10-րդ դասարանում ամբողջությամբ բաց էին թողել ինքնուրույն, ստեղծագործական, քննադատական մոտեցում պահանջող հարցերի պատասխանները:

Մասնակցելով Արարատյան բակալավրիատի ուսուցիչների զարգացման ծրագրին՝ մենք ուսումնասիրեցինք բազմաթիվ հոդվածներ ինքնուրույն մտածողության զարգացման կարևորության մասին: Ես նկատեցի, որ վերապատրաստողները մեր պատասխանների, աշակերտներին ներկայացվող պահանջների մեջ խիստ կարևորում են ՔՄ: Հետազոտական աշխատանքը հարմար առիթ էր խնդիրն ուսումնասիրել ավելի խորքից, և ընտրեցի այս թեման՝ իմ առջև դնելով հստակ նպատակ.

- ՔՄ կարևորագույն հմտություն է բաց, ժողովրդավարական հասարակությունում, ուստի հայ գրականության դասերին ՔՄ զարգացման տեխնոլոգիաների, կոնկրետ՝ քառաբաժան աղյուսակի միջոցով խթանել աշակերտների ինքնուրույն, քննադատական մտածողությանը, ձևավորել գնահատողական վերաբերմունք գրական երկերի, կերպարների բովանդակության, կյանքի, շրջապատի, ազգային ու համամարդկային խնդիրների վերաբերյալ:
- Կիրառել աշակերտների ՔՄ զարգացնող զուհազեռ մեթոդներ, ռազմավարություններ, կազմել տնային և դասարանային աշխատանքների արդյունավետ տեսակներ և օգտագործել գրականության դասերին:

ՔՄ զարգացումը գլոբալ հասկացություն է և պահանջում է ծավալուն հետազոտություն: Նեղացնելով շրջանակը՝ ես կանգ առա ՔՄ զարգացման միջոցով աշակերտների գնահատողական կարողությունների զարգացման խնդրի վրա՝ որպես հիմնական գործիք կիրառելով քառաբաժան աղյուսակը, փորձարարական դասարան ընտրելով 11 հում 1-ը, որտեղ աշակերտների թիվը 13 է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ ՔՄ տեխնոլոգիայի հիմնական գործիքի՝ քառաբաժան աղյուսակի կիրառման հնարավորությունների բացահայտումն ու հիմնավորումն է՝ որպես գնահատողական կարողությունների զարգացմանը նպաստող միջոց:

ԱՌԱՐԿԱՆ: 11-րդ դասարանի հայ գրականության դասին դպրոցականների գնահատողական կարողությունների զարգացմանը նպաստող ՔՄ տեխնոլոգիայի քառաբաժան աղյուսակի մեթոդն է:

ԳԻՏԱԿԱՆ ՎԱՐԿԱԾԸ: Գնահատողական կարողությունների զարգացմանն ուղղված ՔՄ տեխնոլոգիան՝ քառաբաժան աղյուսակը, կլինի կիրառելի և արդյունավետ, եթե.

- վեր հանվեն քառաբաժան աղյուսակի գիտամանկավարժական հիմքերը՝ ավագ դպրոցում կիրառելու համատեքստում,
- բացահայտվեն քառաբաժանի կիրառման արդյունավետությանը նպաստող պայմանները, համապատասխանեցվեն դպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկություններին

ԽՆԴԻՐՆԵՐԸ:

- Դիտարկել սովորողների գնահատողական կարողությունների զարգացման դերն ու անհրաժեշտությունը:
- Ուսումնասիրել քառաբաժան աղյուսակի մեթոդաբանական հիմքերը և հիմնավորել կիրառման հնարավորությունները գնահատողական կարողությունների զարգացման գործում:
- Փորձով հավաստել, որ քառաբաժան աղյուսակը, արդյունավետ կիրառվող և գնահատողական կարողությունների զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիա է:

ՄԵԹՈԴՆԵՐԸ:

-վերլուծել և ընդհանրացրել եմ մանկավարժական առաջավոր փորձի վերաբերյալ աշխատությունները,

-իրականացրել եմ զրույցի, դիտման մեթոդները,

-ուսումնասիրել եմ սովորողների ինքնուրույն և ստեղծագործական աշխատանքները,

-անցկացրել եմ մանկավարժական փորձ

-կիրառվել են վկայությունների վերլուծման մեթոդները

ՔՄ մարդու մտածողության հիմնաքարն է: Գիտակցելով, որ իմ աշակերտներից կպահանջվի քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ ձևերով իմաստավորել տեղեկատվական օվկիանոսում իրենց ստացած հատվածը (Սթիլ և այլք), ես ուսումնասիրեցի գիտամանկավարժական գրականություն: Փոփոխվող աշխարհում հաջողակ լինելու համար ՔՄ մարդուն պետք է ամբողջ կյանքում:

Դեկտեմբերից սկսեցի փորձնական դասեր վարել ՔՄ զարգացման տեխնոլոգիայով՝ քայլ առ քայլ ուշադրությունս կենտրոնացնելով աշակերտների գնահատողական կարողությունների զարգացմանը: Դասարանին տեղյակ պահեցի նպատակադրմանս մասին, ծանոթացրի ՔՄ դրույթներին, որպեսզի հասկանան խնդրի կարևորությունը: Միանգամից չանցա քառաբաժան աղյուսակի կիրառմանը, այլ իրականացրի նախապատրաստական աշխատանքներ:

ՔՄ-ն մտավոր բարդ գործընթաց է, սկսվում է տեղեկատվությամբ և ավարտվում որոշման կայացմամբ: Քննադատաբար մտածելը ենթադրում է ընկալել գաղափարները, խորհել դրանց մասին, դիտել մի փոքր թերահավատությամբ՝ հավասարակշռելու համար դիտարկելով հակադիր տեսանկյունից, հիմնավորումները ամրապնդելու համար կառուցել դրույթների համակարգ և դրա վրա հենվելով՝ գալ որոշակի դիրքորոշման: Այդ բարդ գործընթացի մեջ ես աշակերտներին ներգրավեցի աստիճանաբար՝ ընտրելով փոքրիկ քայլերով առաջ գնալու ռազմավարություն:

ՔՄ զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում փորձում էի պահպանել տեխնոլոգիային բնորոշ համակարգ.

-նպատակների հստակ նախագծում ու մշակում,

-քայլերի հերթականության ճշգրտություն,

-յուրացման նյութի համակարգում և հստակեցում,

-տեխնիկական միջոցների կիրառություն,

Ուսումնասիրելով ՔՄ տեխնոլոգիաները, նրա գործիքները, ՔՄ հետ բազմաթիվ ընդհանրություններ ունեցող պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան, որը կարելի է համարել ՔՄ տեխնոլոգիայի զարգացման հիմք, կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիան, որի հիմքում ընկած է սովորողների համատեղ գործունեության և հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցումը, երբ հաղորդակցումն իրականացվում է զույգի կամ փոքր խմբի ներսում, որտեղ մեկը սովորեցնում է մյուսներին, խաղային ուսուցման տեխնոլոգիան, որը նպաստում է սովորողների երևակայության զարգացմանը, եկա այն եզրակացության, որ քառաբաժան աղյուսակով աշխատելու

համար կարևոր է հատկապես պրոբլեմային և կոլեկտիվ ուսուցման տեխնոլոգիաների համատեղումը: Քննարկեցինք 17- րդ դարի մանկավարժ Յ.Ա.Կոմենսկու միտքը. □Սովորողները շահում են երկու դեպքում էլ, երբ սովորում են ուրիշներից, և երբ սովորեցնում են ուրիշներին□ (Հովհաննիսյան և այլք 2006, էջ13): Փորձեցինք զույգերով, փոքր խմբերով աշխատանքը՝ որևէ թեմայի շուրջ տարբեր կարծիքների համատեղ քննարկումներ, առաջադրված խնդրի լուծման տարբեր տեսակետների վերլուծություն ու միասին ընդունված որոշումներ:

ՔՄ նպատակաուղղված, կշռադատված ու տրամաբանված մտածողություն է, որի դեպքում երևույթները դասակարգվում են ըստ հավաստի փաստերի, դատողությունները լինում են հիմնավորված ու ծանրակշիռ, եզրակացությունները տրամաբանորեն ձևակերպված: Ես աշակերտներին աստիճանաբար ուղղորդեցի այդ ուղղությամբ, ուշադրությունը հրավիրեցի ՔՄ զարգացման առաջին քայլի՝ փաստերի և գիտելիքների մտապահման վրա, առանց որի անհնար է ուսուցման գործընթացը: Մտապահումից և վերարտադրումից անցում կատարեցինք հաջորդ փուլ: Նախապատրաստական փորձերը մենք կատարեցինք բանավոր զրույցների, քննարկումների միջոցով: Վերանայեցինք աշնանային գրավոր աշխատանքները, որտեղ մի քանիսը շրջանցել էին գնահատողական հարցերը:

Այն միտքը, որ «Քննադատական մտածողությունն ուղղված է խելամիտ դատողություններ կատարելուն» (K. Weil et al., 2004 p 272), լուրջ մտավոր աշխատանք կատարելով՝ հարցեր, քննարկում, բանավեճ, նրանք կհանգեն ոչ թե գրքի, այլ կյանքի առաջադրած խնդիրների ճիշտ լուծմանը, որ յուրաքանչյուրն ինքն է որոշում, թե ինչպես մտածի և ինչ եզրահանգումներ անի, որ դա ոչնչով չի ազդի գնահատականի վրա, և որքան ինքանտիպ լինեն կարծիքները, այդքան լավ, մոտիվացրեց աշակերտներին: Այս մասին նրանք էլի էին լսել, բայց երբ սա ձևակերպվեց որպես նպատակ, սայլը տեղից շարժվեց: Խթանելու, առավել մոտիվացնելու նպատակով ես սահիկներ էի ցուցադրում, պատրաստեցինք ասույթներով ցուցապաստառներ և փակցրեցինք դասարանում: Հավելված 1

Նախապատրաստական փուլում կատարվեցին ուսումնական որոնողական աշխատանքներ, ստեղծեցին պրոբլեմային իրավիճակներ, երբ պետք է փնտրել հարցադրումների լուծումները գտնելու ուղիները, կապ ստեղծել նոր գիտելիքների և անձնական կենսափորձի միջև: Աշակերտակենտրոն գործընթացը ապահովեց դրական աշխատանքային միջավայր: Հավատալով յուրաքանչյուրի ուժերին, գնահատելով ու արժևորելով նրանց անձն ու արտահայտած յուրաքանչյուր միտքը՝ ստեղծեցինք բարոյահոգեբանական առողջ միջավայրի, որի անդամը դարձան բոլորը: Աշակերտներ Ա-ն և Բ-ն համարձակ քննարկեցին Սառայի և Թուսյանի կերպարները, ինչը նրանք բաց էին թողել սեպտեմբերի թեստում, մտքեր փոխանակվեցին Ջոհրապի՝ թուրքական կառավարության հանդեպ ունեցած հավատի մասին, արդարացումներ գտան Տիգրանուհու համար, ներեցին Մագթաղինեին....ու դասարանը աստիճանաբար մտավ ՔՄ դաշտի մեջ:

ՔՄ տեխնոլոգիան հիմքում ունի հետևյալ կարևոր գաղափարը՝ սովորեցնել ոչ թե ինչ մտածել, այլ ինչպես մտածել՝ ժամանակակից աշխարհում կայանալու ու իրենց տեղը գտնելու նպատակով: Այդ բարդ գործընթացը ունի իր որոշակի փուլերը, որոնք մեզ ծանոթ են ԽԻԿ համակարգ անունով՝ խթանում, իմաստավորում և կշռադատում. դրանք ունեն իրենց նպատակներն ու իրականացման առանձնահատկությունները. ԽԻԿ-ը ՔՄ զարգացման առանցքն է, որով առաջնորդվելը դարձավ դասապլանի բաղադրիչ:

Խթանման փուլն իրականացնում է դիագնոստիկ ֆունկցիա, որի ժամանակ ուսուցիչը քիչ է խոսում, լսում է սովորողների կարծիքներն ու տեսակետները՝ նպաստելով ակտիվությանը: Իմաստի ընկալման փուլում իրականացվում է նոր նյութի մատուցման բուն գործընթացը, սովորողները առավել ինքնուրույն և ակտիվ են: Կշռադատման փուլում կատարվում է «գիտելիքների «սեփականացում», ձևավորվում է հիմնավորված պատկերացում ուսումնասիրվող նյութի մասին» (Մակարյան 2005,էջ 129), հնարավորություն է ընձեռվում գիտելիքները վերլուծել, համադրել, համեմատել, առանձնացնել կարևորը, կարծիք հայտնել, ամփոփել՝ գալով եզրահանգման:

Քառաբաժան աղյուսակով աշխատելու համար շատ կարևոր են հարցադրումները, «ճիշտ» հարցերը. մանկավարժական գործընթացն առանց հարցադրումների անհնար է պատկերացնել: Հարցերը կարող են աշակերտին մղել խորհելու, կշռադատելու, երևակայելու, ստեղծագործելու, խթանեն մտավոր աշխատանքը, նպաստեն ճանաչողության զարգացմանը, օգնեն հասկանալ, որ ինքն էլ կարող է ունենալ արժեքավոր մտքեր: Ավելի մեծ ուշադրություն դարձրի տրամաբանական պատասխան պահանջող բաց հարցերին:

Սոկրատեսի ոճով ձևակերպված հարցերը աշակերտներին ներգրավեցին քննարկումների մեջ. ի՞նչ նկատի ունեք, ինչպե՞ս հանգեցիք այդ կարծիքին, ի՞նչը նպաստեց տվյալ եզրահանգմանը, արդյո՞ք ձեր ասածը համապատասխանում է ճշմարտությանը, ո՞րն է ձեր տեղեկատվության աղբյուրը, ինչու՞ ընդունեցիք այդ տեսակետը, ինչու՞ եք այդ խնդիրն էական համարում և այլն:

ՔՄ զարգացման մեջ մեծ արդյունավետության կարող է հանգեցնել ուսումնառության խնդիրներին, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը նվիրված ամերիկացի հոգեբան-մանկավարժ Բ.Բլումի «Ուսուցման նպատակների տաքսոնոմիա»-ի դրույթներին հետևելու հմտությունը: Տաքսոնոմիան լայն տարածում է գտել աշխարհում: Բլումը ուսուցման նպատակները բաժանում է երեք խմբի՝ ճանաչողական, ներգործական և հոգեշարժողական՝ կարևորելով ճանաչողական խումբը, որը հայտնի է որպես՝ գիտելիքների լրիվ յուրացման տաքսոնոմիա:

Ըստ ավանդական դասակարգման՝ գիտելիքների յուրացման առաջին մակարդակը համարվում է ընկալումը, իսկ վերջինը՝ կիրառումը (Бабанский 1983 с145): Բ.Բլումը ճանաչողական խմբի նպատակները բաժանում է վեց փուլի՝ ներհատուկ սովորելուն՝ պարզից դեպի բարդ սկզբունքով՝ գիտելիք, իմաստավորում, կիրառում, վերլուծություն, համադրություն և գնահատում (Վարդումյան 2005 էջ267-269):

Ի տարբերություն ավանդական ընկալման՝ Բ.Բլումը գտնում է, որ ուսուցման ընթացքում աշակերտը ոչ միայն ձեռք է բերում գիտելիքներ և մտապահում /գիտելիք/,

այլ նաև համադրում է ունեցածի հետ /իմաստավորում/, նոր գիտելիքները կիրառում պրակտիկայում /կիրառում/, մակերեսային յուրացումից գնում դեպի գիտելիքի վերլուծություն /անալիզ/, որին հաջորդում է համադրումը /սինթեզ/, երբ երեխան ընդլայնում է յուրացրած գիտելիքը և համակարգում, համապատասխան դատողություններ անում, որոշումներ կայացնում ու գնահատում /կշռադատում/: Ուսուցման համակարգը Բ.Բլումը համեմատում է սար մագլցելու հետ: Առաջին աստիճանը մտապահումն է՝ «սարի ստորոտը», իսկ գնահատումը, որոշումների կայացումը՝ «գագաթը»:

Քանի որ ուսումնասիրության նպատակը քառաբաժան միջոցով վերջին մակարդակի խթանումն է, իմ քայլերը ես կատարում էի տաքսոնոմիայի հերթականությամբ՝ քառաբաժան հանձնարարելով թեմայի որոշակի յուրացման փուլում: Հարցադրումների ժամանակ նույնպես օգտագործել եմ Բ.Բլումի հարցերի համակարգը՝ ուղղված ՔՄ խթանմանը.

-Փաստերին վերաբերող հարցեր:

-Ձևափոխված հարցադրումներ կամ □այլ կերպ՝ սեփական բառերով արտահայտում պահանջող□ հարցեր:

-Մեկնաբանության հարցեր. հաստատվում են պատճառահետևանքային կապերը:

-Կիրառության հարցեր. գտնում են առաջադրվող խնդիրների լուծումները:

-Վերլուծական հարցեր. նույն երևույթի այլ տեսանկյունից դիտարկում:

-Համադրության հարցեր. օգտագործելով ունեցած գիտելիքը և փորձը՝ առաջադրված խնդիրները լուծել ստեղծագործաբար:

-Գնահատման հարցեր. աշակերտներին մղում են լավ ու վատի կամ ճիշտ ու սխալի մասին դատողություններ և եզրահանգումներ անել՝ որպես ելակետ ընդունելով սեփական չափանիշները, զգացմունքները, փորձը: Գնահատման հարցերը մղում են ստացած տեղեկատվության որակական գնահատմանը, սեփական վարքագծի արժևորմանը:

ՔՄ ժամանակ խիստ կարևոր են ինչպես ուսուցչի, այնպես էլ աշակերտների կողմից առաջադրվող հարցերը, որոնք ևս պիտի ընդգրկեն հարցադրումների բոլոր մակարդակները:

Այսպիսով, ՔՄ զարգացմանն ուղղված նախապատրաստական փուլում ես կատարեցի տարբեր տիպի աշխատանքներ, բանավոր քննարկումների, գրավոր աշխատանքների, տնային աշխատանքների, ելքի տոմսերի, դասերի անդրադարձի արդյունքում հավաքագրեցի նախնական վկայություններ: Նախապատրաստական փուլը համարելով ավարտված՝ անցա բուն նպատակիս իրականացմանը՝ քառաբաժան աղյուսակի միջոցով ՔՄ և գնահատողական կարողությունների զարգացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

ՔՄ տեխնոլոգիան միավորել ու ամփոփել է մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետ ու արդիական կողմերը՝ դառնալով ժամանակի պահանջներին համահունչ: Այն ենթադրում է ուսուցման այնպիսի ձևերի ընտրություն, որոնք չեն վնասում, այլ նպաստում են աշակերտների բնականոն զարգացմանը՝ հնարավորություն տալով մեկ դասի ընթացքում իրականացնել անհատական, խմբային աշխատանքներ, որոնք ենթադրում են դիրքի ու տեղի փոփոխում, ակտիվություն:

Աշխատելով ՔՄ տեխնոլոգիայով՝ ուսուցիչը պիտի պատրաստ լինի նոր գործելակերպի, ունենա կարողություններ ու հմտություններ, լինի իր գործի վարպետը՝ աշխատանքը դարձնելով ոչ միայն արդյունավետ, այլև հաճելի, ընդունելի, կարևոր ու նշանակալի: Հենց այս շեշտադրմամբ ես սկսեցի իմ փորձը:

Տարբեր հեղինակների կողմից մշակվել և լայն կիրառություն են ստացել ՔՄ բազմաթիվ հնարներ ու մեթոդներ: ՔՄ տեխնոլոգիան մեթոդների ամբողջություն է, և ամեն մի մեթոդ իր մեջ ամփոփում է մի քանի մեթոդներ:

ՔՄ մեթոդներն են՝ մտագրոհ, փոխգործուն նշաններ, խմբավորում, Վեննի դիագրամ, խորանարդում, կենսագրական բանաստեղծություն, խառնված հերթականություն, երեք բանալի և մեկ կողպեք, կմախք, պրիզմա, խճանկար, շրջանաձև շարադրանք, զույգերով ընթերցում:

Ստեղծագործական, գնահատողական, ինքնուրույն կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են՝ հնգյակ, բանալի բառեր, աքրոստիկոս, հինգ րոպեանոց շարադրանք, քառաբաժանում, հարցադրումներով ուղղորդված ընթերցանություն, բաց և փակ հարցեր, ինքնագնահատման աղյուսակ, ելքի տոմսեր, կանխագուշակումների աղյուսակ, ռուբրիկ:

Ստեղծագործական, գնահատողական կարողությունների զարգացման մեթոդներից ես ընտրեցի քառաբաժանը՝ դրան նախորդող մտագրոհով, հայտորոշիչ հարցադրումներով, ուղղորդված ընթերցանությունը, հարցադրումները և 5-10

րոպեանոց շարադրանքը: Աշակետներն աշխատեցին, մենակ, զույգերով և խմբով: Կներկայացնեմ 6 դասի արդյունքներ:

Լինելով մարդու մտածողության հիմնաքարն ու զարգանալով անձնական փորձի հիման վրա՝ ՔՄ բնորոշվում է ճանաչողական հետաքրքրությամբ ու հնարավորություն է տալիս ակտիվորեն աշխատել տեղեկատվության, տեքստի հետ: Այս հատկանիշն է հնարավորություն տալիս այն արդյունավետ կիրառել դասապրոցեսում: ՔՄ զարգացման լավագույն միջոցը տեքստի վրա կատարվող աշխատանքը, ուստի քառաբաժանով աշխատելու համար ես ընտրեցի այնպիսի թեմաներ, որոնք ուղեկցվում են ճանաչողական, դաստիարակչական տեսանկյունից հագեցած տեքստերով:

Առաջին դասը Հ. Թումանյանի «Գելը» պատմվածքի ուսուցումն էր: Հավելված 2.:

Ես խնդրեցի ՄՄ նախագահ Գ. Այվազյանին ներկա գտնվել դասին: Որպես դասի վկայություն՝ կարևոր էր դասադիտարկողի գրառումների թերթիկը: Գ. Այվազյանը դասի թերություն նշեց ՏՏ քիչ օգտագործումը: Ես առարկեցի՝ ասելով, որ ԱՅԲ-ում մեզ սովորեցրել են լավ արդյունքի հասնել՝ առանց ՏՏ գերագնահատելու: Իհարկե, ես դասին ունեի սահիկաշար, բայց դա կարևոր դեր չխաղաց, քանի որ ավելի կարևոր էր աշակերտների աշխատանքը քառաբաժանի վրա: Հավելված 2.Ա

Աշակերտներին անսովոր թվաց, որ մտագրոհը պիտի գրառեն իրենք: Նորություն էր փոխներգործուն նշաններով ընթերցանությունը, բայց դա կատարվեց արդյունավետ, ինչը վկայեց քննարկման ժամանակ անցկացվող համեմատությունը՝ իմացածի և նոր սովորածի միջև, որը կապ ստեղծեց նաև նոր գիտելիքների և անձնական կենսափորձի միջև: Դասի հաջող ընթացքի մասին էին վկայում աշակերտների ելքի տոմսերը: Մի քանիսը գրել էին. «Ես այնքան շատ բան սովորեցի գայլերի ու նրանց բնավորության մասին, որ վստահ եմ՝ էլ երբեք չեմ վախենա նրանցից»: Հավելված 2.Բ

Ցավում եմ, որ միայն մի քանի ելքի տոմս պահպանվեց՝ հիմնականում դրական արձագանքով: Հաջորդ դասի ելքի տոմսերը նույնպես ամբողջությամբ

չպահպանվեցին, բայց երրորդ դասից սկսած ես հավաքեցի դրանք՝ դարձնելով կարևոր վկայություն:

Քառաբաժանը ներկայացնելիս դասի թույլ կողմերից էր խմբերի միջև հարցուպատասխանը: Հարցերը կրկնվում էին, հարց տվողները և խմբերը ուշադիր չէին պատասխանը լսելիս: Դասի գլխավոր թերությունն այն էր, որ աշակերտները ամբողջ ուշադրությունը դարձնելով քառաբաժան աղյուսակի լրացմանը, խիստ անփույթ էին բանավոր պատասխանների ժամանակ: Չնայած քառաբաժան աղյուսակները լավ ներկայացվեցին, բայց խմբերի հարցուպատասխանը չծառայեց իր նպատակին: Որպես առաջին դասի թերություն ես պիտի նշեմ նաև այն, որ աշակերտները ձգտում էին պատմվածքի հատվածների լոգոն նկարել հնարավորինս գեղեցիկ՝ դրա վրա կորցնելով շատ ժամանակ. ես բացատրեցի, որ ժամանակը պետք է օգտագործել մտքեր գրելու և ոչ թե նկարելու վրա:

Դասի ընթացքում ապահովվեց ՔՄ տեխնոլոգիայի կարևոր պայմանը՝ բոլորին տրվեց սեփական մտքերն արտահայտելու հնարավորություն և ապահովվեց կարծիքների բազմազանությունը: Սակայն բանավոր մտքերը հագեցած չէին ինքնուրույն մտածողությամբ, կրկնում էին տեքստը: Խմբերին տրվեց ձևավորող գնահատական: Դասի վերջնարդյունքը, աշակերտների ոգևորությունը հաստատեց իմ ակնկալիքները ՔՄ տեխնոլոգիայով դաս վարելու մասին:

Հաջորդ դասը Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի ուսուցումն էր, որն ինքնատիպ էր նրանով, որ ես առաջին անգամ ձայնագրեցի դասը, որը դարձավ լավագույն վկայությունը, թե ինչպես եմ վարում ՔՄ տեխնոլոգիայով դասը: Աշակերտները չգիտեին այդ մասին, իմացան դասի վերջում և հաճելիորեն զարմացան, ցանկացան լսել դասը: Դրական կողմն այն էր, որ աշակերտները ակտիվ ու անկաշկանդ մասնակցեցին դասին՝ չվախենալով սխալվել, անհամաձայնության հանդիպել: Այս դասի համար կարևոր որակ էր, երբ աշակերտները դատում էին առողջ ու անկաշկանդ, հակառակվում, տարբեր կարծիքներ հայտնում, պնդում սեփական տեսակետը: Հատկապես բուռն էին քննարկումները կնոջ մասին խոսելիս,

ես պարզեցի, թե որքան շատ բան նրանք գիտեն կնոջ հոգեմտավոր աշխարհի մասին: Այս քննարկումներն ավելի լուրջ ու հասուն էին, քան նախորդ դասինը:

Միշտ թվացել է, թե ժամանակը չի բավականացնում, բայց լսելով դասի ձայնագրությունը՝ ես հասկացա, որ իմ համբերությունը չի բավարարում ճիշտ պատասխանը լսելու համար: Հաճախ ես առաջ եմ ընկնում աշակերտից: Դա լուրջ թերություն է:

Այդուհանդերձ՝ ես հասա իմ նպատակին՝ ևս մի քայլ առաջ տանելով հատկապես աշակերտներ Ա-ի և Բ-ի ինքնուրույն մտածողությունը: Խմբերը քառաբաժանները կազմեցին՝ չկրկնելով մեկը մյուսին: Ի՞նչ եմ տեսնում և ի՞նչ եմ լսում հատվածներում առաջին խումբը գրել էր հետաքրքիր մտքեր՝ տեսնում են Դեր Զորը, անապատ, ուղտեր, արև, լսում են Կոմիտասի ձայնը, արաբական ծորուն մեղեդի, զանգերի ձայն: Մյուս խումբը տեսնում էր գալարվող օձեր, կնոջ մարմին, լսում էր քամու ոռնոց, մարդկային ճիչեր: Դասի՝ ինձ ուղղված հաջողված հարցերից էր՝ ինչու՞ ենք դպրոցում խոսում հոռետեսության, հուսահատության, աշխարհաթողության մասին: Պատասխանելու իրավունք տվեցի աշակերտ Ա-ին, ով տրամաբանական պատասխան տվեց. Խոսում ենք հասկանալու և դրանց ազդեցությանը չենթարկվելու համար: Հավելված 3

Դասը գնահատեցի արդյունավետ և հագեցած: Հնչեցին տարբեր մտքեր՝ կնոջ, ընկերոջ, հայրենիքի, իշխանությունների մասին, որոնց արդիականացումը և կապը մեր կյանքի հետ գնահատողական կարողության վկայություն էր: Ելքի տոմսերում հետաքրքիր էր հետևյալ գրառումը. «Ես սովորեցի, որ չի կարելի հավատալ կնոջը»: Հավելված 3.Ա

Այս երկու դասից հետո ես ստուգեցի տնային առաջադրանքները, որոնք նույնպես հանձնարարված էին կարճ շարադրանքի միջոցով ՔՄ զարգացման նպատակով: Աշակերտների գրավոր խոսքը թույլ էր, ավելի շատ գրքային մտքեր էին արտահայտում, քան ինքնուրույն: Հետադարձ կապի մեջ գրեցի այդ մասին: Վեյլի և Կինչելոյի այն միտքը, որ քննադատական մտածողությունն ուղղված է խելամիտ դատողություններ կատարելուն, երևաց Հոփիսիմեի՝ հոռետեսության մասին

ինքնատիպ վերացարկման մեջ. «Հանճարեղ մարդիկ կյանքին նայում են ողբերգական հայացքով, նրանց չի կարող գոհացնել կյանքում տեղի ունեցող անարդարությունները, և երջանկությունն էլ նրանք չեն ընկալում մեզ պես: Նրանց համար կարևոր է ուրիշների երջանիկ լինելը, այդ պատճառով նրանք ավելի շատ դժբախտ են, քան երջանիկ»: Ճանաչողական գիտելիքների տեսանկյունից ավելի պարզ ու կոնկրետ էին «Գելը» պատմվածքի շուրջ դատողությունները, իսկ «Աբու-Լալա Մահարի» պոեմինը հստակ չէին ձևակերպված:

«Ավ. Իսահակյան» թեման ավարտելուց հետո հանձնարարեցի առաջին թեմատիկ աշխատանքը թեստ-տետրերի գնահատողական և վերլուծական բնույթի հարցադրումներով, որոնք աշակերտները բաց էին թողում: Կազմեցի հինգհարցանի թեստ՝ յուրաքանչյուր հարցին 4 միավոր: Արդյունքները գոհացուցիչ էին: Ինձ առանձնապես հետաքրքիր էր այն երկու աշակերտների աշխատանքը, ովքեր սովորաբար նշում էին միայն ընտրովի հարցերը: Աշակերտ Ա-ի և Բ-ի պատասխանները թեև հակիրճ էին, բայց տրամաբանված էին ու բովանդակալից:

Հավելված 3 Բ

Քառաբաժանի կիրառմամբ հաջորդ դասը Սիամանթոյի «Պարը» բանաստեղծությունն էր: Դասադիտարկման էր եկել իմ կոլեգաներից Ա. Հունանյանը: Կիրառվեց ՔՄ երկու մեթոդ՝ հարցադրումների միջոցով բանաստեղծության վերլուծություն և քառաբաժանը:

Աշակերտները կարողացան իրենց կազմած և իմ տված հարցերի միջոցով վեր հանել բանաստեղծության գաղափարը, կերպարները: Գրատախտակին գրվեցին հետաքրքիր հարցեր. 1. Ինչու՞ էր թուրք խուժանը ծարավի հայ կանանց պարին: 2. Գերմանուհին ի՞նչ էր անում այդ դժոխքում 3. Ի՞նչ կլիներ, եթե կանայք ապրեին: 4. Ի՞նչ զգացում է արթնացնում բանաստեղծությունը:

Աշակերտները դասը կապեցին այլ առարկաների ու դասերի հետ, ինչը ՔՄ արդյունք է: Նրանք ունեին Ցեղասպանության պատճառների ու հետևանքների մասին հստակ դիրքորոշում, կարողանում էին հիմնավորել, պնդել սեփական կարծիքը, զուգահեռներ անցկացնել մեր օրերի հետ: Շարադրությունը կարդալուց հետո եզրակացրի, որ աշակերտները առաջ են գնում Բլումի տաքսոնոմիային համապատասխան: Դասի վկայությունները՝ դասադիտարկողի գրառումները, իմ

անդրադարձը, աշակերտների ելքի տոմսերը, տնային շարադրությունը վկայում են, որ դասը ծառայեց ՔՄ զարգացմանը:

Դասի չհաջողված կողմը խմբով աշխատելու, միմյանց լսելու մշակույթի պակասն է, որը դեռ չի հասել պատշաճ մակարդակի: Բանավոր խոսքում թույլ էին տրվում սխալներ, որոնք չվրիպեցին լեզվի ոստիկանի ուշադրությունից: Պետք է շարունակել ամենօրյա աշխատանք՝ թերությունները շտկելու, ՔՄ զարգացման ուղղությամբ: Հավելված 4

Հավելված 4 Ա Հավելված 4 Բ

Քառաբաժանով չորրորդ դասին՝ Վ. Տերյանի «Երկիր Նաիրի» ժողովածուն, դասալսման եկավ իմ մենթորը՝ Սեդա Դալլաքյանը:

Այս դասի ամենակարևոր վկայությունը Ս. Դալլաքյանի կողմից արված դասալսման գնահատականն է (տես PDF նիշքը): Դասի հաջողված փուլերից էր հայտորոշումը, մտագրոհը, խմբային աշխատանքը: Դասադիտարկողի աչքից չէր վրիպել դասի ուժեղ և թույլ կողմերից և ոչ մեկը՝ անգամ իմ հուզմունքը: Դասը հագեցած էր առաջադրանքների բազմազանությամբ, ՌԻՆԳ-ի ռազմավարության մի քանի տեսակներով: Սակայն ինձ չբավականացրեց ժամանակը, որը պետք է տրամադրվեր տնային աշխատանքը բացատրելուն, ինչպես նաև ելքի տոմսերը գրելուն: Դասը զարգացրեց աշակերտների ՔՄ, արժևորելու, գնահատելու կարողությունը:

Որպես դասի թույլ կողմ Սեդան նշեց. աշակերտները հնարավորություն չէին ունենում խոսքն ավարտելու և մտածելու, խոսքն ամփոփում էի ես: Քիչ էր աշակերտի մտածելու ժամանակը, և ես ավելի շատ խոսեցի, քան ընդունելի է ըստ ՔՄ զարգացման տեխնոլոգիայի: Ես ընդունեցի մենթորի ուղղորդումները և սկսեցի առաջնորդվել դրանցով:

«Վահան Տերյան» թեման անցնելուց հետո տրվեց թեմատիկ թեստ ԿԳ նախարարության թեստ-տետրերում: Հաճույքով արձանագրեցի, որ վերջին երկու առաջադրանքները, որոնք ուղղված են ՔՄ, չէր կատարել ընդամենը երկու աշակերտ: Հավելվածում ներկայացված է Ա և Բ աշակերտների աշխատանքը, ովքեր ընդհանրապես չէին գրում այս բնույթի հացերը:

Հավելված 5 Հավելված 5 Ա Հավելված 5 Բ

Հինգերորդ դասը՝ Լ. Շանթ «Հին աստվածներ» դրաման, առանձնահատուկ էր կարծիքների բախմամբ, սուր տեսակետների արտահայտմամբ, քանի որ խոսքը կուսակրոնության, մեղքի և ունայնության մասին էր: Աշակերտները կարողացան իմաստալից կարծիքներ ու մտքեր արտահայտել այս բարդ ու հակասական թեմայի շուրջ: Առհասարակ, ինչպես ես դիտարկեցի այս ընթացքում, ՔՄ զարգացման

ուղղությամբ տարվող բոլոր աշխատանքներում և հատկապես քառաբաժանով աշխատելիս, սովորողները դառնում են մանկավարժական գործընթացի ակտիվ մասնակիցները, ինչը հանգեցնում է նաև սոցիալական ակտիվության: Բարոյական հարցերի շուրջ նրանց ակտիվ քննարկումները, քառաբաժանի գրառումները վկայում են նրանց դրական ակտիվության մասին:

Հետաքրքիր էին լոգոները և գրառումները խորհրդաշատության մասին, որը նրանք համեմատեցին տեսիլքների և երազների հետ, ինչը ավելի պատկերավոր դարձրեց քննարկումը: Դասի գտնված մասը երկրորդ խմբի կողմից ծովը որպես սրտի խորհրդանիշ, իսկ երկինքը որպես մտքի խորհրդանիշ ներկայացնելն էր: ՔՄ տեխնոլոգիայի մեթոդները, խմբային աշխատանքը, քառաբաժանը նպաստեցին ակտիվ աշխատանքային մթնոլորտի ապահովմանը, ստեղծեցին այնպիսի պայմաններ, որ յուրաքանչյուր աշակերտ կարողանա աշխատել իրեն հարմար տեմպով, ունենալ իր ներդրումը, զգալ հաջողության հաճույքը:

Ելքի տոմսերում դրական արձագանքն ավելի շատ էր, բայց երկու աշակերտ գրել էին, որ խորհրդապաշտության մեջ ամեն ինչ չէ, որ հասկանալի է, և չհասկացան, թե ինչի՞ խորհրդանիշեր էին Ճերմակավորը, Ալենուշները: Հավելված 6

Հավելված 6 Ա

«Եղիշե Չարենցի «Տաղարան» ժողովածուն» դասն անցկացրի ՔՄ զարգացման հարցադրումների և քառաբաժանի մեթոդով: Քառաբաժանը հանձնարարվեց որպես անհատական տնային աշխատանք: Հետաքրքիր էր պարզել, թե ինչպես են նրանք անհատապես ստեղծում քառաբաժան: Մտագրոհը պարզեց իմացության նախնական մակարդակը, և սկսեցինք աշխատել: Աշակերտները կարողացան ճիշտ պատասխանել հարցերին, հարցեր կազմեցին, ամենահաջողվածները գրվեցին գրատախտակին. 1.Ինչու՞ չհասկացան Չարենցին: 2. Ո՞րն է կնամոլության և կնամեծարության տարբերությունը: 3. Չարենցը կանխազգու՞մ էր իր ճակատագիրը: 4. Չարենց-Արփենիկ զուգահեռը:

Ես համոզվեցի, որ դասի որակը էապես կշահի, եթե հաշվի առնվի ամենակարևոր պայմանը՝ սովորողներին ժամանակ տրվի ունեցած գիտելիքները

վերհիշելու, մտքերը ձևակերպելու ու հստակեցնելու համար: Խմբերին հանձնարարվեց տարբերակված տնային աշխատանք՝ կազմել քառաբաժան «Տաղարանի» երեք բանաստեղծությունների վերաբերյալ: 1.«Երբ էս հին աշխարհը», 2.«Հայաստանին», 3.«Ես իմ անուշ Հայաստանի»: Տնային աշխատանքներին տրվեց հետադարձ կապ՝ ձևավորող գնահատականով:

Հավելված 7

Բոլոր դասերն ունեին հատուկ ուղղվածություն՝ կարևորել յուրաքանչյուրի անձը, կատարած աշխատանքը, արժևորել նրանց մտքերն ու պատասխանները, հարգանքի ու գնահատման արժանանացնել, եթե անգամ դրանք չեն համապատասխանում մյուսների կարծիքին:

Դասերին ձևավորվեց դրական աշխատանքային մթնոլորտ՝ ապահովելով ՔՄ զարգացման նպաստավոր պայմաններ:

«Եղիշե Չարենց» թեմայի ամփոփումից հետո թեստային աշխատանք հանձնարարվեց: Արդյունքները գոհացուցիչ էին: Վերջին երկու հարցին գերազանց էր պատասխանել 4 աշակերտ, ինչը վկայություն է քառաբաժանով կատարված աշխատանքների, ՔՄ զարգացման մյուս տեխնոլոգիաների: Հավելված 7 Ա

## ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին փուլում կատարվեցին տվյալների մշակումներ և դասերի վերլուծություններ: Հարցաշարերի, գրավոր աշխատանքների արդյունքները ստուգվել ու գրանցվել են մատյանում, աղյուսակներում, ներկայացվել գծապատկերների տեսքով: Հայտորոշիչ հարցադրումների արդյունքները որոշել են քառաբաժանը սկսելու նախնական մակարդակը, այնուհետև քառաբաժանի ժամանակ խմբերին տվել ենք ինչպես միավորային, այնպես էլ ձևավորող գնահատականներ:

Ամփոփվել և վերլուծվել են նաև տնային աշխատանքները: Տնային աշխատանքներին տրվել է հետադարձ կապ, աշակերտները իրենք իրենց տվել են ինքնագնահատական: Վերլուծության մեջ հաշվի են առնվել նաև գործընկերների և մենթորի կողմից կատարված դասադիտարկումների արդյունքները, ելքի տոմսերը: Ձևավորող գնահատականներով բնութագրվել է նաև խմբային աշխատանքների կարգապահական բաղադրիչը: Թեստային ամփոփիչ աշխատանքներից ստացել են միավորային գնհատականներ:

Երկու թեմաների ամփոփումից հետո տրվեցին նույն բնույթի թեստային առաջադրանքները, որոնցում արդեն մեկուկես տարի աշակերտների մեծ մասը բաց էր թողնում ՔՄ պահանջող հարցերը, ինչն էլ դարձել էր հետազոտությունը գրելու հիմնկան շարժառիթ: Թեստային ամփոփիչ աշխատանքներից ստացած միավորային գնհատականները առաջընթացի չափման ամենահավաստի վկայությունները դարձան:

Վերլուծվել են բոլոր դասերը, վեր են հանվել դասերի ուժեղ և թույլ կողմերը, անդրադարձի մեջ նշվել է վերջնարդյունքին հասնելու հիմնավորումը: Վերլուծությունը կատարվել է՝ ուսումնասիրելով և հաշվի առնելով ձեռքի տակ ունեցած բոլոր վկայությունները: Կարևորվել է աշակերտների կարծիքը, որը արտացոլվել է թե՛ պատասխանների, թե՛ ինքնագնահատականների, թե՛ ելքի տոմսերի մեջ:

Հետազոտական աշխատանքի դասապլանները, հավելվածները վկայում են, որ ՔՄ տեխնոլոգիաները, հատկապես քառաբաժանը, որպես ակտիվ ուսուցման միջամտություն՝ տալիս է նոր արդյունք՝ խթանելով սովորողների ստեղծագործական ու ճանաչողական կարողությունները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտության շրջանակներում ՔՄ տեխնոլոգիայի քառաբաժան մեթոդը ուսումնասիրվեց ավագ դպրոցականների գնահատողական կարողությունների զարգացման տեսանկյունից, դիտարկվեց որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական մեթոդ, քանի որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս սովորողներին լինել ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից՝ այն հարմարեցնելով տարիքային և անհատական առանձնահատկություններին: Իրավացի էր Կոմենսկին՝ գրելով, որ սովորողները շահում են երկու դեպքում էլ, երբ սովորում են ուրիշներից, և երբ սովորեցնում են ուրիշներին:

ՔՄ զարգացմանն ուղղված քառաբաժան աղյուսակը կիրառելի և արդյունավետ տեխնոլոգիա է: Այն ուսուցչին հնարավորություն է տալիս լինել ուղղորդողի դերում, ստեղծել երեխաների համար հաճելի աշխատանքային պայմաններ՝ փորձելով երեխաներին ներգրավել իրենց կատարած աշխատանքի վերլուծության, գնահատման գործընթացում, յուրաքանչյուրին մղել ակտիվ գործունեության՝ նպաստելով քննադատական և գնահատողական կարողությունների զարգացմանը:

Քառաբաժանը, լինելով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա, իր մեջ միավորել ու ամփոփել է մի շարք տեխնոլոգիաների արդյունավետ, արդիական ու նշանակալի կողմերը՝ դառնալով առավել ընդգրկուն ու ժամանակի պահանջներին համահունչ:

Փորձառության շրջանակներում ես խնդիր էի դրել իմ առջև հավաստել, որ ՔՄ խթանող քառաբաժանը ավագ դպրոցում սովորողների գնահատողական

կարողությունների զարգացմանը նպաստող, կիրառելի և արդյունավետ մեթոդ է: Ես համոզվեցի դրանում:

Որպես վերջնարդյունք կարող եմ հավաստել, որ սովորողների մոտ ձևավորվեցին իրար լսելու, դիմացինի կարծիքն ընդունելու, կարծիքների բախումները կանխելու, ընդհանուր հայտարարի գալու կարողություններ: Արդյունքում սկսեցին ձևավորվել ու զարգանալ որոնողական, ճանաչողական, ստեղծագործական, գնահատողական կարողությունները: Իհարկե, դասի կարծիքների փոխանակման փուլը ունի շտկումների կարիք, բայց առաջին քայլն արդեն արված է:

ՔՄ տեխնոլոգիայի մեթոդները, այդ թվում քառաբաժանը, կարող են կիրառվել ավագ դպրոցի ուսուցիչների կողմից՝ նպաստելով գնահատողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը, ուսուցման գործընթացի ակտիվացմանն ու արդյունավետության բարձրացմանը:

Բ. Բլումի տաքսոնոմիայի ամենաբարձր մակարդակին՝ գնահատողական կարողությունների զարգացմանը կարելի է հասնել քառաբաժանի միջոցով: Գնահատողական կարողությունները մարդու մոտ կարող են դրսևորվել ոչ միայն գիտելիքների, այլև հասարակության, կյանքի խորը ճանաչողության արդյունքում: Գնահատողական հմտություններն ու կարողությունները ճանաչողության բարձրակետն են, որին հնարավոր չէ հասնել առանց ՔՄ զարգացման:

Սովորողները առավել ակտիվ են լինում ուսումնական այն իրադրություններում, երբ պետք է մասնակցել քննարկումների, կարծիք, տեսակետ հայտնել, հիմնավորել այն, ինքնուրույն բացատրել, ինքնուրույն լուծել խնդիրներն ու գտնել տարբեր եղանակներ: Ձևավորվում են ճանաչողական կարողություններ՝ ուսումնական նյութի իմաստավորում ու կիրառում, վերլուծություն, համադրություն, ընդհանրացում, գնահատում ու կշռադատում: Քառաբաժանը, ինչպես նաև ՔՄ զարգացման մյուս մեթոդները Բլումի տաքսոնոմիայի գնահատողական փուլը խթանող արդյունավետ միջոցներ են:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Աստվածատրյան Մ., Վարդումյան Ս., Արնաուդյան Ա. և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, ձեռնարկ ուսուցիչների վերապատրաստման համար, Երևան, «Ոսկան Երևանցի», 2003թ., 336 էջ:

Խաչատրյան Ս., Կրթության փիլիսոփայություն, Երևան, «Լինգվա», 2009թ., 132 էջ:

Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Ս., Համագործակցային ուսուցում, ձեռնարկ, Երևան, «Անտարես», 2006թ., 124 էջ:

Մանուկյան Ս.Պ., Մանկավարժագիտություն: Նոր դասընթաց, ուսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ-97», 2002թ., 512 էջ:

Մակարյան Գ., Քննադատական մտածողության զարգացման խորհրդային և հետխորհրդային հայեցակարգերը, «Մխիթար Գոշ» /Գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ/, 3, 2005թ., էջ 128-130:

Սթիլ Ջ.Լ., Մերեդիթ Ք.Ս., Թեմփլ Չ., «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի համար ուղեցույցներ /1–8/, Երևան, 1998թ:

Վարդումյան Ս. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, «Նոյյան տապան», 2005թ., 407 էջ:

Ջինի Լ.Սթիլը, Քուրթիս Ս. Մերեդիթը և Չարլզ Թեմփլը Բաց հասարակության ինստիտուտի կողմից ֆինանսավորված և «Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամի կազմակերպած վերապատրաստման դասընթացների ձեռնարկ:

Артур Робер. Большой толковый психологический словарь.тт 1,2 М. 2000:

Гершунский Б.С. Философия образования.- М.: Московский психолого-социальный институт Флинта.- 1998.- 432 с. Психология. Под ред. И.Б.Дубрывина и др. М.1999:

,,Перемена,, Международный журнал о развитии мышления через чтение и письмо. Номер 4 стр.36-40:

Педагогика/ под ред. Бабанского Ю.К.: Учеб. пос. для студ.- М.: Просвещение.- 1983.- 608 с.

Педагогические технологии: Учеб. пособие/ авт.-сост. Сальникова Т.П.- М.: ТЦ Сфера.- 2010.- 128 с.

Кузнецова А.Г. Личностно-ориентированный подход к современному уроку: Учеб. пособие для студентов высших учеб. Заведений.- Хабаровск: 2001.- 94 с.

Danny K. Weil, Joe L. Kincheloe, Critical Thinking and Learning: An Encyclopedia for Parents and Teachers, Greenwood Publishing Group, 2004, 532 p.

Lynn T. McBrandt and Ronald S. Brandt, The language of learning /a guide to education terms/, Alexsandria, Virginia, 1997, 114 p.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված1

Քննադատաբար մտածող մարդը կարող է պարզորոշ հիմնավորել իր կարծիքը, տեսակետը, եթե որևէ մեկը դրա հետ համաձայն չէ:

ԼԻՆ ԹՈՄ ՄԱՔԲՐԱՆԴ

Քննադատաբար մտածող մարդը կարողանում է որոշել ինֆորմացիայի սկզբնաղբյուրի հավաստիությունը, պարզորոշ տեսնել երևույթների ու իրադարձությունների տրամաբանական կառույցը:

Ա. ԿՈՒԶՆԵՑՈՎԱ

Հավելված 2
Դասապլան

Ուսուցիչ Կարմեն Աիարոնյան

| Առարկա՝ | Հայոց գրականություն | Ամսաթիվ 11.12 2017թ. | | Կիսամյակ1 | | Դասարան 11հ1 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Խմբի բացվածք՝ | Աղջիկ: 12 Տղա: 1 OS - ՈՒՀԿ: | | | | | | |
| Թեմա՝ | Թեմա՝ Հ. Թումանյանի «Գելը» պատմվածքը | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, սահիկաշար, բնագիր, նկարներ | | | | | | |

| | |
|---|---|
| Ամբողջական պատկեր՝ | Աշակերտները արդեն անցել են Հ. Թումանյանի կյանքը, ստեղծագործությունը, քնարերգությունը, քառյակները, պոեմները, հեքիաթները, «Գիքորը»: |
| Դասի նպատակը՝ | -Զարգացնել աշակերտների քննադատական մտածողությունը, գնահատողական կարողություններն ու հմտությունները |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ |
| Վերջնարդյունքները | Կկարողանան.<br>- Ինքնուրույն դատողություններ անել:<br>- Քննադատաբար վերլուծել տեքստը<br>-Գնահատել կերպարների ու իրադրության կապը կյանքի հետ: |

| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները | Նպատակներին հասնելու ռազմավարությունը |
|---|---|
| Դասը անցկացնել քննադատական մտածողության ռազմավարությամբ: Ուշադրություն դարձնել, թե որքանով հաջողվեց ճիշտ կիրառել տեխնոլոգիան ու մեթոդները: Ի՞նչ արդյունքներ կարող եմ արձանագրել ՔՄ զարգացման միջոցով:<br>Օգտագործել ՌԻՆԳ-ի ռազմավարություններից | Երեխաներին նախապես հայտնել եմ իմ նպատակները, ուսումնասիրել գրականություն, ընտրել ՔՄ զարգացման մեթոդներ, նախապատրաստել եմ օժանդակ նյութեր, սահիկներ, տեքստեր:<br>Աշակերտներին տալ առաջ մղող առաջադրանքներ գնահատել բազային վիճակը և առաջ անցնել: Հետադարձ կապ՝ պարզելու կարողացա՞նք արդյունավետ կիրառել այս մեթոդը, և այն նպաստե՞ց ուսումնառությանը: |

| Գործողություններ (ժամ/տևողություն)<br><br>45 րոպե | Ուսումնական գործունեություն<br><br>Աշակերտներ | Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ<br><br>Ուսուցիչ | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| Մուտք՝ հաշվառում-2ր<br><br>Դասի սկիզբ. 10 ր<br><br>1.Դասարանին հայտնել, որ այսօր մենք ուսումնասիրելու ենք Թումանյանի «Գելը» պատմվածքը: Մինչ տեքստ բաժանելը պետք է մի փոքր խորհենք գայլերի մասին մեր իմացած գիտելիքների շուրջ: Աշխատանք զույգերով. 3-5 րոպեի ընթացքում գրի առնել, թե ինչ գիտենք գայլերի մասին՝ ճիշտ կամ սխալ: ԽԻԿ-ի խթանման փուլ<br><br>Ներկայացնել գրածը 5ր.<br><br>ՌԻՆԳ-ի շրջափուլի առաջին կետը՝ Ու՞ր եմ գնում | Զույգերով քննարկում են, գրառում, կազմում ցուցակ<br><br>Աշակերտները կարդում են իրենց | Գրանցում եմ ամսաթիվը, նշանակում բացականերին<br><br>Շրջում եմ դասարանում, հետևում աշխատանքին<br><br>Գրառում եմ գրատախտակին, ի հայտ եմ բերում անհամաձայնությունները, տալիս ուղղորդող հարցեր: | Ներգրավել բոլորին, վերհիշել բազային գիտելիքը, կապել նորի հետ, որի վրա պիտի կառուցվի այսօրվա դասը:<br><br>Ո՞ր հարցի ժամանակ էին ամենաշատ տարաձայնությունները:<br><br>Որտեղի՞ց է գալիս թյուրըմբռնումը:<br><br>Հետևել, որ ներգրավված լինեն բոլորը: |

| | | | |
|---|---|---|---|
| | գրառումները: | Քաջալերում եմ բոլորին, ակտիվացնում: | |
| 2. ԽԻԿ-ի իմաստի ընկալման փուլ 10ր<br><br>Երկու զույգեր միանում են և կազմում 4 հոգանոց խմբեր: Բաժանում եմ թերթիկները. պատմվածքը բաժանված է երեք մասի:<br>ա.Կարդալ հատվածը՝ օգտագործելով փոխգործուն նշաններ:<br><br>բ. կազմել քառաբաժան աղյուսակ:<br><br>Ավարտելուց հետո զույգերով քննարկել, թե կարդացածը որքանով համապատասխանեց մեր իմացածին ու գրառածին: | Աշակերտները աշխատում են խմբով, կատարում փոխներգործուն նշումները, լրացնում քառաբաժանը: | Շրջում եմ դասարանում, հետևում աշխատանքին, ուղղորդում, պատասխանում աշակերտների հարցերին: | Ամփոփիչ հարցեր՝ կապված ամենաշատ հանդիպած անհամաձայնությունների հետ: |
| ՌԻՆԳ-ի երկրորդ շրջափուլ. Որտե՞ղ եմ հիմա:<br><br>3.ԽԻԿ-ի երրորդ փուլ 15ր<br><br>Կշռադատում, գնահատում | Յուրաքանչյուր զույգից մեկը, օգտագործելով փոխներգործուն գրառումները, ներկայացնում է, թե ինչն էր իր պատկերացրածից ճիշտ, ինչը՝ սխալ: | Ուսուցիչը լսում է, ուղղորդում, ուշադրություն հրավիրում առաջին փուլում գրատախտակին գրված անհամաձայնություններին, ճշտում, ամրապնդում: | Ձևավորող գնահատական տալ խմբի աշխատանքին, խրախուսել առանձին պատասխաններ, գովեստի արժանացնել ինքնուրույն և քննադատական մտածողություն պարունակող մտքերը:<br><br>Օգտագործել ձևավորող գնահատականի և ինքնագնահատականի ուժը: |
| | Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր քառաբաժանը, մեկնաբանում: Մյուս | Լսում եմ, ուղղորդում, | |

| | | | |
|---|---|---|---|
| 4.Կապ՝ իմացածի և նոր սովորած գիտելիքի միջև՝ աղամանդաձև գծապատկերով: 3ր<br><br>5.Ելքի տոմսեր.2ր<br><br>6. Տնային աշխատանքի հանձնարարում.1ր<br>Գրել փոքրիկ շարադրանք.<br>«Մարդը և գայլը» վերնագրով | խմբերից կարող են հարցեր ուղղել, պարզաբանել անհասկանալի հարցերը:<br><br>Հարցերի միջոցով աշակերտներն ամփոփում են, թե ինչ գիտեին և ինչ իմացան:<br>Մտածում են բոլորը, պատասխանում են լեզվի կապիչով ընտրվածները:<br><br>Աշակերտները գրառում են ելքի տոմսերը | պարզաբանող հարցեր տալիս,<br><br>Լսում եմ, ուղղորդում, կատարում շտկումներ: | Բացահայտել սխալները, պատճառաբանել, համեմատել, հակադրել, համադրել, մաքրել ցեխերը,,՝ հաջորդ հարցադրումը անսխալ կատարելու նպատակով:<br><br>- |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| Տերմիններ<br><br>Գրագիտություն<br><br>Թվագիտություն | Պատմվածք, սյուժե, կերպար<br><br>Ճիշտ գրել հատուկ անունները՝ անձնանուններ, տեղանուններ | | |
| Աջակցություն | Սահիկները պատրաստելուն և ցույց տալուն օգնելու է դասարանի աշակերտուհի Լենան | | |
| Գնահատում | Ձևավորող գնահատական, ինքնագնահատական հետադարձ կապ: | | |
| Տնային աշխատանք | Գրել շարադրություն «Մարդը և գայլը» վերնագրով՝ կիրառելով գնահատողական, քննադատական մոտեցում: | | |
| Դասին անդրադարձ | Դասը անցավ ակտիվ, աշակերտների ներգրավվածությամբ: Դասի մտագրոհի փուլը այս անգամ մի փոքր անսովոր թվաց, որովհետև սովորողներն իրենք պետք է գրառեին իրենց իմացածը և ներկայացնեին: Դա մեծացրեց պատասխանատվությունը, ինչը առավել արդյունավետ էր: Աշակերտներին դուր եկավ իրենց իմացածի և կարդացածի համեմատությունը, երբ նրանք բացահայտեցին իրենց սխալները: Աշակերտները հետաքրքրությամբ կատարեցին նաև փոխգործուն նշանների աշխատանքը և իրենց համար միանգամայն պարզ դարձավ, թե ինչի վրա պետք է կենտրոնացնեն ուշադրությունը:<br><br>Քառաբաժանը ներկայացնելու թույլ կողմը միմյանց ուղղվող հարցերի ու դրանց պատասխանների որակն էր: Այդ փուլը չհաջողվեց, հարցերը բովանդակալից չէին, հարցը տվողները ուշադիր չէին պատասխանները լսելու ժամանակ:<br><br>Քառաբաժանի աշխատանքի մեջ առավել բարձր մակարդակ ապահովեց առաջին խումբը. նրանք կարողացան իրենց աշխատանքը ներկայացնել քննադատական մտածողության պահանջներին համապատասխան՝ համեմատեցին ուրիշ կենդանիների հետ, ֆիլմերից օրինակներ բերեցին, կապեցին մեր կյանքի հետ՝ նախորդ օրը լեռնային գյուղերից մեկում գայլերը ոչնչացրել էին հոտը:<br><br>Երկրորդ խումբը ավելի շատ ժամանակ էր տրամադրել նկարելու վրա և բնագրի գնահատողական մասը թույլ էր: Բայց նրանք կատարեցին կարևոր եզրահանգում. փաստորեն ամենասարսափելի գազանն էլ վտանգավոր չի լինի, եթե մենք ճանաչենք նրան:<br><br>Երրորդ խմբի արտահայտած ինքնատիպ միտքն այն էր, որ մարդկանց մեջ էլ կան վտանգավոր գայլեր: Եվ որ այդ տեսակ մարդիկ ավելի մեծ վտանգ են | | |

| | |
|---|---|
| | ներկայացնում, քան գայլերը: Նրանք ներկյացրեցին նաև կենդանիների հետ կապված բնապահպանական հարցեր, որտեղ երևաց նրանց գնահատողական վերաբերմունքը, կշռադատելու, եզրահանգումներ կատարելու կարողությունը, նրանք խորհդանիշ էին ընտրել ոչ թե գայլ, այլ Կարմիր գիրքը:<br><br>Աշակերտների մեծ մասը ստացան ձևավորող բարձր գնահատականներ:<br><br>Ես այսուհետև հաճախ կաշխատեմ այդ մեթոդով: Առաջադրանքները կատարվեց հաճույքով և ակտիվությամբ, ինչն էլ նպաստեց դրական վերջնարդյունքին: Գոհացուցիչ էին նաև երեխաների անդրադարձը դասին, որոնք նրանք գրեցին ելքի տոմսերի վրա:<br><br>Հուսով եմ, որ տնային աշխատանքը նույնպես գոհացուցիչ կլինի: |

ԴԱՍԱԼՍՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ թիվ ________

1. Դասարանը XIհ1 2. Աշակերտների թվաքանակը 12, որից բացակա ________

3. Ուսուցչի ազգանունը [illegible] 4. Առարկան հայ գրականություն

5. Դասի թեման [illegible]

6. Դասալսման նպատակը [illegible]

7. Դասի կահավորվածությունը [illegible], դասագրքերով ապահովվածությունը ________

8. Դասի համառոտ բնութագիրը (կառուցվածքը, տարբեր մասերի կենսագործումը եւ այլն) [illegible]

9. Դիտողություններ [illegible]

10. Առաջարկություններ [illegible]

11. Եզրակացություն [illegible]

Դասալսող [illegible] (ստորագրություն) Դասը վարող ուսուցիչ [illegible] (ստորագրություն) «11» [illegible] 2007 թ.

[illegible]



Հավելված 3

Դասապլան

Ուսուցիչ Կարմեն Աhարոնյան

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա՝ | Հայ գրականություն | Ամսաթիվ 19.12 2017թ. | | Կիսամյա կ2-րդ | | Դասարան 11h1 | |

| | |
|---|---|
| Խմբի բացվածք՝ | Աղջիկ: 12 Տղա: 1 OS - ՈՒՀԿ: - |
| Թեմա՝ | Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, սահիկաշար, մարկերներ, պաստառ, բնագիրը |
| Ամբողջական պատկեր՝ | Աշակերտները արդեն անցել են Ավ. Իսահակյանի կյանքն ու ստեղծագործությունը, վերլուծել են բանաստեղծությունները, պատկերացում ունեն Իսահակյանի ապրած ժամանակի, սիմվոլիզմի մասին: Գիտեն անգիրներ, կարողանում են վերլուծել բանաստեղծությունները, կարդացել են պոեմը: |
| Դասի նպատակը՝ | -Զարգացնել աշակերտների քննադատական մտածողությունը<br>- Խնդրակենտրոն հարցերի միջոցով խթանել արժևորող, գնահատողական և ինքնուրույն մտքեր արտահայտելու կարողությունը |
| Վերջնարդյունքները | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ<br><br>-Քննադատական մտածողության զարգացման արդյունքում աշակերտները կարողանան գնահատել և արժևորել Ավ. Իսահակյանի հայտնի պոեմը, արդիականացնել նրանում արտահայտված համամարդկային գաղափարները: |

| | |
|---|---|
| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները<br>Դասի առաջին փուլը անցկացնել հայտորոշիչ գնահատման կիրառմամբ, ինչպես նաև փորձարկել քննադատական մտածողության զարգացման գործիքանին՝ մտագրոհ, քառաբաժան, 5-րոպեանոց շարադրանք: Ի՞նչ արդյունքներ կարող եմ արձանագրել փորձարկվող մեթոդի կիրառման միջոցով: | Նպատակներին հասնելու ռազմավարությունը<br>Երեխաներին նախապես հայտնել եմ իմ նպատակները, ուսումնասիրել գրականություն, ընտրել քննադատական մտածողության զարգացման մեթոդներ, նախապատրաստել օժանդակ նյութեր, սահիկներ: Աշակերտներին տալ առաջ մղող հայտորոշիչ գնահատական և ձևավորող գնահատական: Դասի վերջում կատարել անդրադարձ՝ պարզելու կարողացա՞ արդյունավետ կիրառել այս մեթոդը, և այն նպաստե՞ց ուսումնառությանը: Օգտագործել ՌԻՆԳ-ի ռազմավարություններից |

| Գործողություններ<br>(ժամ/տևողություն)<br>45 րոպե | Ուսումնական գործունեություն<br><br>Աշակերտներ | Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ<br><br>Ուսուցիչ | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| Մուտք՝ հաշվառում-2ր<br><br>Դասի սկիզբ. 10ր<br><br>8 հայտորոշիչ հարցեր՝ պարզելու նախնական գիտելիքները:<br>1.Ավ. Իսահակյանը արևմտահայ գրող է.<br>2.Իսահակյանի առաջին բանաստեղծությիունն է «Ծաղիկները հեզ թեքվում են»:<br>3.Իսհակյանը ռոմանտիկ բանաստեղծ է:<br>5. «Հավերժական սերը» բալլադում մահը հաղթում է սիրուն:<br>6. «Մայրը» լեգենդում չար հարսը ստիպում է մորը տանել ու նետել ծովը:<br>7. «Հայրենիքիս» բանաստեղծությունը գրել է Իսահակյանը, իսկ «Հայրենիքիս հետ»՝ Թումանյանը:<br>8. «Հայրենի հողը» լեգենդը որևէ երկրի մասին չէ և արտահայտում է ընդհանրական գաղափար:<br><br>ՈՒՆԳ-ի շրջափուլի առաջին կետը՝ Ու՞ր եմ գնում<br><br>Մտագրոհ-5ր<br>Դուք կարդացել եք պոեմը. Ի՞նչ զգացիք այն ավարտելուց հետո: | ՈՒՆԳ-ի ռազմավարություն՝ կանաչ, դեղին, կարմիր քարտեր:<br>Աշակերտները բարձրացնում են քարտերը, հաշվառում եմ, գրառում:<br>-Այո-կարմիր<br>-Ոչ,-կապույտ<br>-Չգիտեմ,-դեղին<br><br>Հետևում են աղյուսակին, տեսնում արդյունքները, քննարկում, անհասկանալի հարցերը բարձրաձայնում:<br><br>Ամեն մեկը ասում է իր զուգորդումը | Գրանցում եմ ամսաթիվը, նշանակում բացականերին<br><br>Աշակերտներին հայտնում եմ դասի մոտակա նպատակները՝ հայտորոշիչ գնահատման միջոցով պարզել ունեցած գիտելիքները՝ դրանց հիման վրա առաջ գնալու և հիմնական նպատակին հասնելու համար:<br><br>Ցուցադրում եմ սահիկը, որի վրա 8 հարցեր են,՝ Աշակերտները պատասխանում են կարմիր-կանաչ- դեղին քարտերով:<br><br>Հաշվառում եմ, գրառում աղյուսակի մեջ, տարաձայնությունների դեպքում տալիս ուղղորդող հարցեր, հարցնում աշակերտներին:<br><br>Գրում եմ գրատախտակին, հուշող ուղղումներ անում, սխալի դեպքում հարցնում դասարանին՝ գրե՞մ այս միտքը: | Ներգրավել բոլորին, վերհիշել բազային գիտելիքը, կապել նորի հետ, որի վրա պիտի կառուցվի այսօրվա դասը:<br><br>Ո՞ր հարցի ժամանակ էին ամենաշատ սխալները:<br>Որտեղի՞ց է գալիս թյուրըմբռնումը:<br>Պարզաբանել, անցնել առաջ<br><br>Առաջին փուլի ամփոփիչ հարցեր.1.Ի՞նչ թեմանեով է ստեղծագործել Իսահակյանը<br>2.Որտեղի՞ց է գալիս նրա հիասթափությունը կնոջ հանդեպ:<br>3.Ի՞նչ պատվանուն ուներ Իսահակյանը: |

| | | | |
|---|---|---|---|
| Դասի ընթացք .<br>1-ին փուլ 10 ր<br>Հարցադրումներ<br><br>1.Ի՞նչն էր պոեմը գրելու շարժառիթը<br>2.Ո՞ր բանաստեղծությունից են գալիս պոեմի սաղմերը<br>3.Ո:րն է նմանությունը արաբ բանաստեղծի հետ<br>4. Ո՞րն է տարբերությունը<br><br>Ամփոփում 2ր<br><br>ՌԻՆԳ-ի երկրորդ շրջափուլ.<br>Որտե՞ղ եմ հիմա<br><br>Խմբային աշխատանք.10 րոպե:<br>Առաջին խումբ. Կարդալ «Աբու-Լալա Մահարի› պոեմի »<br>նախերգանքը և առաջին սուրահը:<br>Կազմել քառաբաժան աղյուսակ:<br>Գրել 5-րոպեանոց շարադրանք՝ պատասխանելով հետյալ գնահատողական հարցին.<br>Ինչու՞ աշխարհաթող եղավ բանաստեղծը:<br><br>2-րդ խումբ. Կարդալ «Աբու-Լալա Մահարի› պոեմի » երկրորդ սուրահը:<br>Կազմել քառաբաժան աղյուսակ:<br>Գրել 5-րոպեանոց շարադրանք՝ պատասխանելով հետյալ գնահատողական հարցին.<br>Արդարացի՞ է Իսահակյանը կնոջը տված իր գնահատականի մեջ<br><br>3-րդ խուււմբ. Կարդալ «Աբու-Լալա Մահարի› պոեմի » չորրորդ սուրահը:<br>Կազմել քառաբաժան աղյուսակ:<br>Գրել 5-րոպեանոց շարադրանք՝ պատասխանելով հետյալ գնահատողական հարցին.<br>Ձեր ընկերները նմա՞ն են | Մտածում են բոլորը, պատասխանում է լեզվի կապիչով ընտրվածը:<br>Արժևորում են հնչած կարևոր մտքերը<br><br>Աշակերտները լուռ մտածում են, կատարում առաջադրանքը: | Ամփոփում եմ՝ ասելով, որ այս բոլոր մտքերը, որ դուք ասացիք, «Աբու-Լալա Մահարի» պոեմի բովանդակությունն են կազմում:<br>Ձևավորող գնահատական եմ տալիս ամբողջ դասարանին:<br><br>Լսում եմ, խրախուսում, ուղղում,<br><br>Շրջում եմ, ուղղում, օգնող հարցեր տալիս, հետևում ինքնուրույն աշխատելուն, կարգապահությանը: | ՌԻՆԳ-ի վագրիկներով ռազմավարութունը:<br><br>Բացահայտել սխալները, պատճառաբանել, համեմատել, հակադրել, համադրել, մաքրել ցեխերը,,՝ հաջորդ հարցադրումը անսխալ կատարելու նպատակով:<br>Օգտագործել ձևավորող գնահատականի և ինքնագնահատականի ուժը: |

| | | | |
|---|---|---|---|
| Իսահակյանի ընկերներին<br><br>Խմբային աշխատանքի ներկայացում: 10ր | | | |
| Խմբերը միմյանց հարցեր են ուղղում 5ր | Ներկայացնում են աշխատանքները, խորհրդանիշները, պոեմից կարդում հատվածներ, պատասխանում արժևորող ու գնահատող հարցերին, ներկայացնում շարադրանքը: | Հետևում եմ, ուղղորդում, ավելացնում բաց թողած սխալները: Տալիս եմ ձևավորող գնահատական: Աշակերտները տալիս են ինքնագնահատական, ի՞նչը չեն հասկացել, ի՞նչն են մոռացել: | Աշակերտները համաձայնվում եմ կամ հակադրվում |
| ՌԻՆԳ-ի երրորդ շրջափուլ. Ինչպե՞ս կարող եմ բացը լրացնել | | | Խրախուսել արտահայտիչ ընթերցանությունը: |
| Դասի ավարտ- 3ր գրում են ելքի թերթիկներ<br>1. Ինչ տարա այս դասից:<br>2. Ինչն էր նորություն:<br>3. Ինչի հետ համաձայն չեմ: | Աշակերտները հարցեր են տալիս խմբի աշխատանքի վերաբերյալ | Լսում եմ, ուղղորդում: | |
| Տարբերակված տնային առաջադրանքի հանձնարարում.2ր<br>Բաժանել տնային հանձնարարության թերթիկները՝ տարբերակված առաջադրանքներով:<br>1. 4 աշակերտ գրում են կարճ շարադրանք. Ավ. Իսահակյանի գաղափարների արդիականությունը<br>2.4 աշակերտ-Իսահակյանի հոռետեսության դրսևորումը պոեմում<br>3.5 աշակերտ-Իսահակյանի լավատեսության դրսևորումը պոեմում<br>Գրականության տետրերում դուրս գրել պատկերավորման միջոցները | | | Ինչի՞ մասին չխոսեցինք, որ կուզեիք լրացնել:<br><br>Տնային աշխատանքի միջոցով կարող են շարունակել աշխատանքը քննադատական մտածողությա զարգացման նպատակով: |

Հաջորդ դասին
ստուգել՝ որքանո՞վ
առաջադրված
հարցերը
նպաստեցին
քննադատական

| | | | |
|---|---|---|---|
| | | | մտածողության զարգացմանը: |
| Տերմիններ<br><br>Գրագիտություն<br><br>Թվագիտություն | Պոեմ, նախերգանք, կառուցվածք, սյուժե, սուրահ, խորհրդանիշ:<br><br>Բանաստեղծությունների վերնագրերի ճիշտ գրությունը, հատուկ անունների գրությունը: | | |
| Աջակցություն | Սահիկները պատրաստելուն և ցույց տալուն օգնելու է դասարանի աշակերտուհի Հռիփսիմեն: | | |
| Գնահատում | Ձևավորող գնահատական, ինքնագնահատական: | | |
| Տնային աշխատանք | Գրել կարճ շարադրանք 3 տարբերակով Գրակ. տետրում դուրս գրել պատկերավորման միջոցները: | | |
| Դասին անդրադարձ | Դասը ծառայեց իր նպատակին, աշակերտները ակտիվ մասնակցեցին, արտահայտեցին ինքնուրույն մտքեր ու կարծիքներ: Ժամանակը չբավականացրեց խմբերը միմյանց հարցեր ուղղելուն: Սա դասի սխալ հաշվարկման պատճառով տեղի ունեցավ, հաջորդ անգամ կաշխատեմ ճիշտ բաշխել ժամանակը: Դասի գտնված հարցերի մեջ կարող եմ առանձնացնել Քնարիկի հարցը՝ ինչու՞ ենք մենք դպրոցում խոսում հոռետեսության մասին: Նրան պատասխանեց Հռիփսիմեն՝ Հոռետեսությունը, հիասթափությունը մարդու անբաժան զգացումներն են, խոսում ենք այն ճանաչելու և նրա ազդեցությանը չենթարկվելու համար: Արդիականացման, անկեղծության պահ էր այն, երբ աշակերտներից մեկը խոստովանեց, որ ծնողները և ուսուցիչները պետք է լինեն լավատես, մինչդեռ միշտ չէ, որ այդպես է: | | |

Հավելված 3.Ա



Հավելված 3.Բ

1.Գրիր Իսահակյան-Թումանյան զուգահեռի մասին քո կարծիքը:

2. «Մեր պատմիչները և գուսանները» բանաստեղծության մեջ ու՞մ կողմն է քո համակրանքը՝ պատմիչների՞, թե՞ գուսանների: Հիմնավորիր:

3. Ինչպե՞ս կմեկնաբանես հայրենի հողի պաշտամունքի մասին քո կարծիքը:

4.Ի՞նչ սովորեցիր «Աբու-Լալա Մահարի» պոեմից:

5. Արդիակա՞ն է Ադամի կերպարը «Լիլիթ» պատմվածքում:

| փորձ. դաս. | գիտ. համ. | ճանաչ. կարող. | ստեղծ. կարող. | ինքն. կարող. | արժեք. համ. |
|---|---|---|---|---|---|
| բարձր | 80 % | 90 % | 60 % | 50 % | 65 % |
| միջին | 15 % | 10 % | 35 % | 40 % | 30 % |
| ցածր | 5 % | 0 % | 5 % | 10 % | 5 % |
| | | | | | |

Հավելված 4.

Դասապլան

ՈւսուցիչԱհարոնյան Կարմեն.

| Առարկա՝ | Հայ գրակա | Ամսաթիվ **15.01. 2018** | | Կիսամյա կ | | Դասարա ն | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | նությու **2** | | | | | | |
| | ն **11**հ.1 | | | | | | |
| Խմբի բացվածք՝ Թեմա՝ | Աղջիկ: **12** Տղա: **1** OS ՈՒՀԿ:**2** Սիամանթոյի «Պարը» | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝<br><br>Ամբողջական պատկեր՝ | Դասագիրք, գրականության տետր, համակարգիչ, սահիկաշար, Սիամանթոյի լուսանկարը, բնագիրը, կավիճ, գրատախտակ:<br><br>Աշակերտներն արդեն անցել են Սիամանթոյի կյանքը, ստեղծագործությունները, ժողովածուները: Նախորդող ենթաթեման եղել «Կարմիր լուրեր բարեկամես» ժողովածուն: Այս դասին հարցադրումների | | | | | | |
| Դասի նպատակը՝ | մեթոդով և քառաբաժանով վերլուծելու ենք Սիամանթոյի «Պարը», ինչպես նաև Հայոց ցեղասպանության թեման:<br><br>Հարցադրումների և քառաբաժան աղյուսակի մեթոդով զարգացնել ՔՄ<br>- գնահատողական, վերլուծական կարողությունները<br>- հարցեր կազմելու, հարցերի տեսակները տարբերելու և ճիշտ | | | | | | |
| | պատասխանելու հմտությունները, հարցերի շուրջ առողջ բանավեճ ծավալելու մշակույթը | | | | | | |
| Վերջնարդյունքները | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ<br><br>Աշակերտները կկարողանան.<br>-գնահատել, վերլուծել բանաստեղծության մեջ առաջ քաշված գաղափարները<br>-ինքնուրույն դատողություններ անել, պատմել, նկարագրել,<br>- բանավիճել, քննարկել, առարկել, համեմատել, հակադրել, վերացարկել<br>- տարբերել հարցերի տեսակները, վարժվել ինքնուրույն հարցեր կազմելու | | | | | | |
| | հմտութան մեջ | | | | | | |

Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները

Նպատակներին հասնելու ռազմավարությունը

| | |
|---|---|
| Ճիշտ բաշխել ժամանակը, հետևել ներգրավվածությանը, ձևավորող գնահատման միջոցով զարգացնել հարցեր կազմելու հմտությունը, ՔՄ զարգացման համատեքստում հետևել Բլումի տաքսոնոմիայի դինամիկային: | Խմբերը բաժանել վիճակահանության սկզբունքով, օգտագործել լեզվի կապիչները, ձևավորող գնահատականի միջոցով խթանել ՔՄ, Բլումի տաքսոնոմիայի դինամիկային, ուղղորդել ճիշտ հարցեր կազմել: Օգտագործել հետադարձ կապի առաջին և երկրորդ մակարդակները՝ ըստ դասափուլի համապատասխանության: |

| Գործողություններ (ժամ/տևողություն) 1դասաժամ, 45րոպե | Ուսումնական գործունեություն Աշակերտներ | Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ Ուսուցիչ | Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| Դասի մուտք, հաշվառում 1ր<br><br>Սկիզբ 1ր<br><br>Մեկնարկ մտագրոհով. Ինչի՞ մասին է «Պարը» 5ր | Աշակերտները ծանոթանում են դասի թեմային, նպատակներին<br><br>Աշակերտները ասում են առաջին մտքին եկածը, ուշադիր լսում են միմյանց՝ չկրկնելու արդեն ասվածը:<br><br>Հետևում են գրատախտակին գրված հասկացություններին, մտածում, անհամաձայնության դեպքում ասում իրենց կարծիքը: | Սահիկաշարով ցուցադրում եմ Սիամանթոյի նկարը, Ակն գյուղը: Աշակերտները դիտում են հատվածներ հայ կանանց հեզաճկուն պարերից:<br><br>Գրատախտակին գրում եմ այն բոլոր բառերն ու բառակապակցությունները, որոնք կասեն աշակերտները՝ աշխատելով գրի առնել բոլորի ասածը:<br><br>Լսում եմ, ուղղում, խրախուսում ճիշտ պատասխանը: | Համոզվել՝ կարդացե՞լ են բանաստեղծությունը, հասկացե՞լ են. բոլորին ներգրավել դասի մեջ: |

| | | | |
|---|---|---|---|
| Ընթացք 30ր Դասարանը բաժանել 3 խմբի: | Աշակերտները ըստ վիճակահանության կազմում են խմբեր, տեղավորվում: | | |
| Առաջադրանք.1 10ր Յուրաքանչյուր խումբ քննարկման արդյունքում կազմում է մեկ բաց և մեկ փակ հարց բանաստեղծության վերաբերյալ՝ մյուս խմբին տալու համար:<br><br>Նշանակել լեզվի ոստիկան, որպեսզի հետևի լեզվական սխալների, վրիպումների: | Խմբերը քննարկում են, խմբագրում ձևակերպում հարցերը:<br><br>Մեկը գրի է առնում: | Շրջում եմ շարքերում, հետևում, ուղղորդում, | Ինչպե՞ս են կարողանում համագործակցել, բոլո՞րն են մասնակցում, ճիշտ են հասկացել բաց և փակ հարցերի տարբերությունը: |
| Խմբերը պատասխանները | Պատասխանում են, հիմնավորում պատասխանը, առարկում, համաձայնվում, հակառակվում: | Լսում եմ, հետևում կարգապահությանը, համաձայնվում եմ, ժպտում, առարկում, ուղղումներ անում, լրացուցիչ տեղեկություններ հաղորդում: | Պարզել կազմած հարցերի ճիշտ կառուցվածքը, բնագրից բխող բովանդակությունը, ինչպես նաև դրանց պատասխանելու, խոսքը հիմնավորելու հմտությունները, բանավիճելու |
| Ամփոփելով փուլը՝ տալ միավորներ՝ | Գրատախտակին գրել | Հետևում եմ, ուղղում, եթե կարիքը կա: Յուրաքանչյուր | |

| | | | |
|---|---|---|---|
| հիմավորելով դրանք և գումարելով կամ հանելով լեզվի ոստիկանի միավորը: 2ր | միավորները | խմբի տված մեկ լավագույն հարցը գրում եմ գրատախտակին, աշակերտները՝ տետրերում՝ հիմնավորելով՝ ինչու՞ այդ հարցը: | կարողությունները: |
| Առաջադրանք 2 10 ր Խմբերին թերթիկների վրա գրված երեք հարց եմ տալիս: | Մտածում են առանձին, հետո զույգով, հետո խմբով, որոշում են հարցի տեսակը, գրառում են, պատասխանը ներկայացնում է խմբի մյուս աշակերտները, ովքեր առաջին հարցի ժամանակ չէին խոսել: | Ուշադիր լսում եմ, հետևում, որ բոլորը լսեն, չընդհատեն, միայն վերջում հայտնեն իրենց կարծիքը: | Ինքնուրույն մտածողությունը խթանող բաց և փակ, պարզ և բարդ տրամաբանական և դատողական բնույթի հարցերի միջոցով զարգացնել երեխաների վերուծելու, կշռադատելու, եզրահանգումներ անելու կարողությունը: |
| Ամփոփվում է միավորները գումարելով + լեզվի ոստիկանի միավորը: 2ր | Միավորները գրվում են գրատախտակին | Հետևում եմ, նախապատրաստում հաջորդ փուլին | |
| Առաջադրանք 3 10ր Յուրաքանչյուր խմբին տրվում է հատված «Պար»-ից. - Կարդալ, գրել հատվածի հետ կապված երկու հարց, պատասխանել տրված հարցին, կազմել քառաբաժան: | Խմբերը աշխատում են թղթերի վրա գունավոր մարկերներով, կարող են նկարել, լոգո ստեղծել, հատվածի կարևոր մտքերը դուրս բերել: | Շրջում եմ, նայում աշխատանքը, ուղղորդում, հետևում կարգապահությանը:<br><br>Խմբերի հարցերը. | Ճիշտ հասկանալ բնագրի հատվածները, մասերից գնալ դեպի ամբողջը և հակառակը: Զարգացնել հարց կազմելու, հարցին գրավոր հակիրճ և դիպուկ պատասխանելու կարողություն, հատվածից դիպուկ հարցեր բխեցնելու տրամաբանություն: |

| | | | |
|---|---|---|---|
| Աշխատանքի ներկայացում 10ր | Կարդում են հատվածը, պատասխանում հարցին, Ներկայացնում կազմած 2 հարցերը, պաստառի վրա կատարված քառաբաժան աշխատանքը: Աշակերտները ուշադիր լսում են միմյանց պատասխանները, համաձայնվում, հարցեր են տալիս, կամ առարկում: | 1 խումբ. Ի՞նչ գիտես միսիոներական առաքելության մասին 2 խումբ.Ո՞ր քաղաքում և երբ են կատարվում նկարագրված դեպքերը: 3խումբ. Ի՞նչ կարող է ծնել անպատժելիությունը: | |
| Ամփոփում | Աշակերտները գրում են իրենց վաստակած միավորները, առարկություններ կամ հաշվարկի սխալ լինելու դեպքում միջամտում: | Լսում եմ, ուղղում, հետևում ճիշտ ընթերցանությանը, հավանություն տալիս, ժպտում, բացատրություններ տալիս, տեղեկություններ հաղորդում, որոնք նաև գրում են գրատախտակին, աշակերտները գրառում են: | |
| Ավարտ 3ր Ամփոփում | Գրվում են վերջին միավորը+ լեզվի ոստիկանի միավորը | Ամփոփում եմ միավորները, պարզաբանում է, թե ինչու այսքան միավոր ստացան, որն էր խմբի թերությունը, որտե՞ղ փայլեցին, ինչի՞ց երևաց, որ ուշադիր են կարդացել: Զավորող գնահատական է տրվում յուրաքանչյուր խմբի, եթե հարկ կա, նաև անհատական աշխատանքի համար: | Բանավոր հետադարձ կապի միջոցով ճիշտ պատկերացնեն, թե ինչի՞ համար ստացան բարձր կամ ցածր միավոր: Իմանան հարցադրումներով դասի ժամանակ իրենց մասնակցությունն ու դերը, ճիշտ հարցեր կազմելու ճիշտ պատասխաններ տալու տրամաբանությունը: |
| Անդրադարձ 3ր | Հարցերն ուղղվում է | Լսում եմ աշակերտների կարծիքները, համաձայնվում | Վարժվել անդրադարձ կատարելու հմտություններին, |

| | | | |
|---|---|---|---|
| Ինչ նոր բան սովորեցինք այսօր:<br>Ո՞րն էր ամենակարևոր գիտելիքը, հարցը, ինչո՞վ էր կապված նախորդ դասի հետ:<br><br>Ելքի տոմսեր 1ր<br><br>Տնային աշխատանք. 2ր<br>Գրել շարադրություն «Եթե ապրեին...» վերնագրով | բոլորին, պատասխանում են լեզվի կապիչով ընտրվածները: | կամ առարկում: | հասկանալ ինչ վերջնարդյունք ունեցան խմբով աշխատելու դեպքում: Ինչ նոր բան սովորեցին, ինչը գիտեին, ինչն ամրապնդվեց:<br><br>Պարզել, թե ի՞նչպե՞ս են աշակերտները գնահատում Հայոց ցեղասպանության հարցը, ինչպե՞ս են դատում, երևակայում, ստեղծագործում: Ի՞նչ արժեհամակարգ ձևավորեց:<br>Ինչպե՞ս են կարողանում հիմնավորել կարծիքը: |
| Տերմիններ | Բանաստեղծություն, չափածո, ժողովածու, Ցեղասպանություն, սյուժե: | | |
| Գրագիտություն | Տեղանունների, անձնանունների ուղղագրությունը, արևմտահայերենի ևր արևելահայերենի տարբերությունը: | | |
| Թվագիտություն | Սովորում են 19-րդ 20-րդ դարերի տարբերակումը, ժամանակաշրջանը, գիրքը գրելու թվականի գրությունը թվերով և տառերով: | | |
| Աջակցություն | Գրատախտակի վրա գրելիս և ֆիլմը ցուցադրելիս կօգնի Հրանուշը: | | |
| Գնահատում | Քանի որ դասը հարցադրման և քառաբաժանի մեթոդով է և խմբային աշխատանք, կգնահատվեն խմբերը, կխրախուսվեն ակտիվ մասնակցած աշակերտները: Խմբերը կստանան նաև ձևավորող գնահատական: | | |

| | |
|---|---|
| Տնային աշխատանք | Գրել շարադրություն «Եթե ապրեին...» վերնագրով |
| Դասին անդրադարձ | Հարցադրումների միջոցով բանաստեղծության վերլուծությունը ծառայեց ՔՄ զարգացման նպատակին: Աշակերտները կարողացան իրենց կազմած և իմ տված հարցերի միջոցով վեր հանել բանաստեղծության գաղափարը, կերպարներիը: Գրատախտակին գրված հարցերից հետքրքիր էին հետևյալ հարցերը. 1. Ինչու՞ էր թուրք խուժանը ծարավի հայ կանանց պարին: 2. Գերմանուհին ի՞նչ էր խորհրդանշում3. Ի՞նչ կլիներ, եթե կանայք ապրեին: 4. Ի՞նչ զգացում է արթնացնում բանաստեղծությունը: 5. Ո՞վ էր մեղավոր:<br>Ինչպես նախորդ դասերին, այս անգամ էլ աշակերտները կարողացան թեման կապել այլ առարկաների, գրականության այլ դասերի հետ, ինչը ՔՄ զարգացման նախադրյալ է: Աշակերտները հստակ պատկերացում և դիրքորոշում ունեին Ցեղասպանության պատճառների ու հետևանքների մասին, կարողանում էին պատմել, հիմնավորել սեփական կարծիքը, արդիականացնել, վերացարկել, զուգահեռներ անցկացնել մեր օրերի հետ: Լենան հիմնավորեց իր կարծիքը, որ այս բանաստեղծության միջոցով կարելի է աշակերտների մեջ սերմանել մարդասիրություն, գթասրտություն: Դասը համարում եմ հաջողված, քանի որ Բլումի տաքսոնոմիան իրականացվեց: Շարադրությունը կարդալուց հետո ավելի ամբողջական պատկերացում կկազմեմ տաքսոնոմիայի ամենավերին մակարդի մասին: Բայց վերջնարդյունքները դեռ ամբողջովին գոհացուցիչ չեն, հատկապես կազմակերպական տեսանկյունից:<br>Դասի չհաջողված կողմը խմբով աշխատելու հմտության պակասն էր, իրար չլսելը ու անտեղի միջամտելը: Լսելու մշակույթը զարգացնելու վրա դեռ երկար պետք է աշխատեմ: Այդ նպատակով ես կփորձեմ միավորներ, խրախուսանքի ձևեր մտածել հենց լավ լսելու համար և ոչ միայն ճիշտ պատասխանելու համար: Բանավոր խոսքում թույլ էին տրվում սխալներ, որոնք չվրիպեցին լեզվի ուսուցչի ուշադրությունից: Պետք է շարունակել ամենօրյա աշխատանք՝ այս տարածված թերությունները շտկելու, ՔՄ զարգացման ուղղությամբ: |
| | |

4 Ա

ԴԱՍԱԼՍՄԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԹԻՎ ________

1. Դասարանը XI [illegible], 2. Աշակերտների թվաքանակը 13, որից բացակա —

3. Ուսուցչի ազգանունը [illegible] 4. Առարկան հայ գրականություն

5. Դասի թեման [illegible]

6. Դասալսման նպատակը [illegible]

7. Դասի կահավորվածությունը [illegible], դասագրքերով ապահովվածությունը [illegible]

8. Դասի համառոտ բնութագիրը (կառուցվածքը, տարբեր մասերի կենսագործումը եւ այլն) [illegible]

9. Դիտողություններ [illegible]

10. Առաջարկություններ [illegible]

11. Եզրակացություն [illegible]

Դասալսող [illegible] Դասը վարող ուսուցիչ [illegible] «15» [illegible] 2018 թ.

ստորագրություն ստորագրություն

[illegible]

Հավելված 4 Բ



Հավելված 5

Դասապլան

Ուսուցիչ Կարմեն Ահարոնյան

| Առարկա՝ | Հայ գրականություն | Ամսաթիվ 19.12 2018թ. | | Կիսամյակ2-րդ | | Դասարան 11հ1 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Խմբի բացվածք՝ | Աղջիկ: 12 Տղա: 1 OS - ՌԻՀԿ: - | | | | | | |
| Թեմա՝ | Թեմա՝ Վ. Տերյանի ,,Երկիր Նաիրի,, ժողովածուն | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, սահիկաշար, գունավոր թերթիկներ, մարկերներ, պաստառ | | | | | | |
| Ամբողջական պատկեր՝ | Աշակերտները արդեն անցել են Վահան Տերյանի կյանքն ու ստեղծագործությունը, վերլուծել են 6 ժողովածուները, պատկերացում ունեն Տերյանի ապրած ժամանակի, սիմվոլիզմի մասին: Գիտեն անգիրներ, կարողանում են տարբերել ու վերլուծել բանաստեղծական շարքերը, մեկնաբանում են ժողովածուից ժողովածու բանաստեղծը հասունացումը: | | | | | | |
| Դասի նպատակը՝ | -Զարգացնել աշակերտների քննադատական մտածողությունը<br>- Խնդրակենտրոն հարցերի միջոցով խթանել արժևորող, գնահատողական և ինքնուրույն մտքեր արտահայտելու կարողությունը | | | | | | |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ | | | | | | |

| | |
|---|---|
| Վերջնարդյունքները | -Քննադատական մտածողության արդյունքում աշակերտները կարողանան գնահատել և արժևորել Վ.Տերյանի ,,Երկիր Նաիրի,, ժողովածուն, նրա հայրենասիրական բանաստեղծությունները<br>-Արդիականացնել Տերյանի ապրած ժամանակի հիմնախնդիրները<br>-Գնահատել գրողի լավատեսությունը<br>-Արժևորել գրողի դերը ազգի համար օրհասական պահերին<br>-Գիտակցել և վերապրել հայ լինելու հպարտությունը |

| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները | Նպատակներին հասնելու ռազմավարությունը |
|---|---|
| Դասի առաջին փուլը անցկացնել հայտորոշիչ գնահատման կիրառմամբ, ինչպես նաև փորձարկել քննադատական մտածողության զարգացման գործիքանին՝ մտագրոհ, քառաբաժան, 5-րոպեանոց շարադրանք: Ի՞նչ արդյունքներ կարող եմ արձանագրել փորձարկվող մեթոդի կիրառման միջոցով:<br>Օգտագործել ՌԻՆԳ-ի ռազմավարություններից | Երեխաներին նախապես հայտնել եմ իմ նպատակները, ուսումնասիրել գրականություն, ընտրել քննադատական մտածողության զարգացման մեթոդներ, նախապատրաստել օժանդակ նյութեր, սահիկներ:<br>Աշակերտներին տալ առաջ մղող հայտորոշիչ գնահատական և ձևավորող գնահատական: Դասի վերջում կատարել անդրադարձ՝ պարզելու կարողացա՞ արդյունավետ կիրառել այս մեթոդը, և այն նպաստե՞ց ուսումնառությանը: |

| Գործողություններ<br>(ժամ/տևողություն)<br>45 րոպե | Ուսումնական գործունեություն<br><br>Աշակերտներ | Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ<br><br>Ուսուցիչ | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| Մուտք՝ հաշվառում-2ր<br><br>Դասի սկիզբ. 10ր<br><br>10 հայտորոշիչ հարցեր՝ պարզելու նախնական գիտելիքները:<br>1.,,Երկիր Նաիրի,, ժող-ն գրվել է 1913-1916թթ.<br>2.Նաիրի նշանակում է սարերի երկիր:<br>3.Քննադատները Տերյանին մեղադրում էին, որովհետև նա ապրում էր հայրենիքից դուրս և ոչ մի բանաստեղծություն չէր գրել հայրենիքի մասին:<br>5. Բնաբանը վերցված է Պուշկինի բանաստեղծությունից:<br>6.Ժողովածուում զետեղված են նաև մորը նվիրված բանաստեղծություններ:<br>7.Մտովի՞ է վերադառնում, թե իրական:<br>8.Շարքում տեղ են գտել նաև տրիոլետներ | ՌԻՆԳ-ի ռազմավարություն՝ կանաչ, դեղին, կարմիր քարտեր:<br>Աշակերտները բարձրացնում են քարտերը, հաշվառում եմ, գրառում: | Գրանցում եմ ամսաթիվը, նշանակում բացականերին<br><br>Աշակերտներին հայտնում եմ դասի մոտակա նպատակները՝ հայտորոշիչ գնահատման միջոցով պարզել ունեցած գիտելիքները՝ դրանց հիման վրա առաջ գնալու և հիմնական նպատակին հասնելու համար:<br><br>Ցուցադրում եմ սահիկը, որի վրա 6 հարցեր են,՝ Աշակերտները պատասխանում են կարմիր-կանաչ- դեղին քարտերով: | Ներգրավել բոլորին, վերհիշել բազային գիտելիքը, կապել նորի հետ, որի վրա պիտի կառուցվի այսօրվա դասը:<br><br>Ո՞ր հարցի ժամանակ էին ամենաշատ սխալները:<br>Որտեղի՞ց է գալիս թյուրըմբռնումը: |

| | | | |
|---|---|---|---|
| 9.Տերյանի հայրենասիրությունը բանաստեղծություններից ավանդված պատմական հայրենասիրություն է՝ կտրված իրական կյանքից:<br><br>10.Չարենցը ժողովածուն անվանել է՝ « Նաիրյան խոսքերի թանգարան»:<br><br>ՌԻՆԳ-ի շրջափուլի առաջին կետը՝ Ու՞ր եմ գնում<br><br>Մտագրոհ-5ր<br><br>,,Երկիր Նաիրի,, շարքի բանաստեղծությունները գրվեցին 20-րդ դարի<br><br>1913-1916 թվականներին: Ի՞նչ զուգորդում է առաջացնում ձեզ մոտ հայ ժողովրդի պատմության այդ ժամանակը: | -Այո-կարմիր<br><br>-Ոչ,-կապույտ<br><br>-Չգիտեմ,-դեղին<br><br>Հետևում են աղյուսակին, տեսնում արդյյունքները, քննարկում, անհասկանալի հարցերը բարձրաձայնում:<br><br>Ամեն մեկը ասում է իր զուգորդումը | Հաշվառում եմ, գրառում աղյուսակի մեջ, տարաձայնությունների դեպքում տալիս ուղղորդող հարցեր, հարցնում աշակերտներին: Օրինակ՝ արդարացի՞ էին քննադատները Տերյանի նկատմամբ:<br><br>Գրում եմ գրատախտակին, հուշող ուղղումներ անում, սխալի դեպքում հարցնում դասարանին՝ գրե՞մ այս բառը, դու համաձա՞յն ես.<br><br>Ամփոփում եմ՝ ասելով, որ այս բոլոր մտքերը, որ դուք ասացիք, ,, Երկիր Նաիրի,, ժողովածուի բովանդակությունն են կազմում:<br><br>Ձևավորող գնահատական եմ տալիս ամբողջ դասարանին: | Առաջին փուլի ամփոփիչ հարցեր.1.Ի՞նչ համեմատություն եզրեր կարող եք գտնել Սիամանթոյի հետ:<br><br>2.Որտեղի՞ց է գալիս անցյալի առասպելական ոգու արթնացումը:<br><br>3.Հայրենասեր համարվելու համար պարտադի՞ր է հայրենասիրական գործեր գրել:<br><br>Աշակերտները համաձա՞յն են լրացումների հետ:<br><br>ՌԻՆԳ-ի վագրիկներով ռազմավարութունը: |

| | | | |
|---|---|---|---|
| | | Լսում եմ, խրախուսում, ուղղում, | |
| Դասի ընթացք .<br>1-ին փուլ 10 ր<br>Հարցադրումներ<br>1.Ինչու՞ Ե. Չարենցը Տերյանի ժողովածուն կոչում նաիրյան խոսքերի թանգարան: | | | |
| 2.Ինչպե՞ս կմեկնաբանեք ժողովածուի բնաբանը: | | Լսում եմ, ուղղորդում, օգնում, խրախուսում: | Բացահայտել սխալները, պատճառաբանել, համեմատել, հակադրել, համադրել, մաքրել ցեխերը,,՝ հաջորդ հարցադրումը անսխալ կատարելու նպատակով: Օգտագործել ձևավորող գնահատականի և ինքնագնահատականի ուժը: |
| 3.,,Որպես Լաերտի որդի,, բանաստեղծության մասին: | | | |
| 4. Վերադարձի տրամադրությունները. ,,Կարծես թե դարձել եմ ես տուն,, | | | |
| | Աշակերտը նկարի միջոցով ներկայացնում է բանաստեղծությունը:<br>Աշակերտները դիտում են, լսում, մասնակցում, ավելացումներ | Լսում եմ, ուղղորդում, ուղղումներ կատարում: | |
| 5. Կարդալ ,,Բարակիրան նաիրուհին,,<br>Ինչպե՞ս են ներկայացված նաիրուհիները ժողովածուում: | Մտածում են բոլորը, պատասխանում է լեզվի կապիչով ընտրվածը: | | |
| Կարդալ ,,Չեմ դավաճանի իմ | Մտածում են բոլորը, | Լսում եմ, ուղղում, համաձայնվում, | |

| | | | |
|---|---|---|---|
| Նվարդին,,<br>Ի՞նչ է ուզում ասել բանաստեղծը:<br><br>Ամփոփում 2ր<br><br>ՌԻՆԳ-ի երկրորդ շրջափուլ. Որտե՞ղ եմ հիմա<br><br>Խմբային աշխատանք.10 րոպե: Առաջին խումբ. ,,Իջնում է գիշերն անգութ ու մթին,, բանաստեղծության քառաբաժանը կազմել: Գրել 5-րոպեանոց շարադրանք, պատասխանել հետյալ գնահատողական հարցին. Լավատեսության դրսևորումը բանաստեղծության մեջ:<br><br>2-րդ խումբ. ,,Մի՞թե վերջին պոետն եմ ես,, նույն առաջադրանքը և գնահատողական հարց. Արժևորել գրողի դերը ազգի համար օրհասական պահերին:<br><br>3-րդ խուումբ,, Մեզ մի խառնեք,, բանաստեղծությունը. Նույն առաջադրանքը և գնահատողական հարց. Ի՞նչ զգացում է ձեզ համակում բանաստեղծությունն ընթերցելիս: | պատասխանում է լեզվի կապիչով ընտրվածը:<br>Արժևորում են, են, ասում կարևոր մտքերը<br><br>Աշակերտները լուռ մտածում են, կատարում առաջադրանքը: | խրախուսում:<br><br>Շրջում եմ, ուղղում, օգնող հարցեր տալիս, հետևում ինքնուրույն աշխատելուն, կարգապահությանը: | Աշակերտները համաձայնվում եմ կամ հակադրվում<br><br>Խրախուսել արտահայտիչ ընթերցանությունը: |

| | | | |
|---|---|---|---|
| Խմբային աշխատանքի ներկայացում: 10ր<br><br>Դասն ավարտվում է դասարանի ամենալավ ասմունքող աշակերտուհու՝ Լենայի ասմունքով: Հնչում է Կոմիտասի երեժշտությունը:<br><br>ՌԻՆԳ-ի երրորդ շրջափուլ.<br><br>Ինչպե՞ս կարող եմ բացը լրացնել<br><br>Դասի ավարտ- 3ր գրում են ելքի թերթիկներ<br>1. Ինչ տարա այս դասից:<br>2. Ինչն էր նորություն:<br>3. Ինչի հետ համաձայն չեմ:<br><br>Տարբերակված տնային առաջադրանքի հանձնարարում.2ր<br><br>Բաժանել տնային | Ներկայացնում են աշխատանքները, խորհրդնիշները, կարդում են բանաստեղծություններ ը, պատասխանում արժնորող ու գնահատող հարցերին, կարդում շարադրանքը: | Հետևում եմ, ստուգում, ուղղորդում, ավելացնում բաց թողած սխալները: Տալիս եմ ձևավորող գնահատական: Աշակերտները տալիս են ինքնագնահատական, ինչու՞ սխալ գրեցին, ի՞նչը չեն հասկացել, ի՞նչն են մոռացել: | Ինչի՞ մասին չխոսեցինք, որ կուզեիք լրացնել: |

| | | | |
|---|---|---|---|
| հանձնարարության թերթիկները՝ տարբերակված առաջադրանքներով: 5 աշակերտ գրում են կարճ շարադրանք. Վ. Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» հոդվածի տրված հատվածը ինչպե՞ս կարող եք կապել մեր ժամանակի հետ: Գրել երկու հարց հատվածի վերաբերյալ:<br><br>Քառաբաժան աղյուսակ կազմել ժողովածուի մյուս 2 բանաստեղծությունների վերաբերյալ, որոնք դասի ժամանակ չկատարվեցին, գրել համեմատությունները, փոխաբերությունները, մակդիրները:<br><br>1.,,Դու հպարտ չես, իմ հայրենիք,, 4աշ.<br><br>3,,Այնպես անխինդ են, նման լացի,,4աշ. | | | Տնային աշխատանքի միջոցով կարող են շարունակել աշխատանքը քննադատական մտածողությա զարգացման նպատակով:<br><br>«Քննեցեք ձեր սիրտը, կա՞ արդյոք այնտեղ հավատ, որով պիտի կենդանանա մեր հոգևոր Հայաստանը, եթե չկա, ապա զուր են ձեր ջանքերը նյութական Հայաստանի համար, նա չի կարող կենդանանալ, նա հոգով կարող է միայն կենդանի լինել»:<br><br>Հաջորդ դասին<br><br>ստուգել՝ որքանո՞վ առաջադրված հարցերը նպաստեցին |

| | | | |
|---|---|---|---|
| | | | քննադատական մտածողության զարգացմանը: |
| Տերմիններ<br><br>Գրագիտություն<br><br>Թվագիտություն | Տրիոլետ, խորհրդանիշ, բնաբան:<br><br>Բանաստեղծությունների վերնագրերի ճիշտ գրությունը, հատուկ անունների գրությունը: | | |
| Աջակցություն | Սահիկները պատրաստելուն և ցույց տալուն օգնելու է  դասարանի աշակերտուհի Հռիփսիմեն: | | |
| Գնահատում | Ձևավորող գնահատական, ինքնագնահատական: | | |
| Տնային աշխատանք | Գրել տրված առաջադրանքը 3 տարբերակով՝, 1 .5 աշակերտ գրում են կարճ շարադրանք. Վ. Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» հոդվածի տրված հատվածը ինչպե՞ս կարող եք կապել մեր ժամանակի հետ: Գրել  երկու հարց հատվածի վերաբերյալ:<br><br>2. Կազմել քառաբաժան աղյուսակը, կատարել բառային աշխատանք, գտնել պատկերավորման միջոցները: 3.Կազմել քառաբաժան աղյուսակ, գտնել պատկերավորման միջոցները: | | |

Ա

Ցնորում է կապույտ մութի աշխարհում:

«[illegible]» +

15. Ե՞րբ և որտե՞ղ է մահացել Տերյանը. /2/ +

1920թ. Օրենբուրգ

16*. 3-4 նախադասությամբ վերլուծի՛ր Տերյանի «Կարուսել» բանաստեղծությունը. /5/ +

[illegible]

17*. Ի՞նչ խնդիրներ էր արծարծում Տերյանը «Հայ գրականության գալիք օրը» հոդվածում. /5/ 4

[illegible]

7,5 ≈ 8. [illegible]

43

ն,

*Ցնորում է կապույտ մութի աշխարհում:*

«Մթնշաղ»

15. Ե՞րբ և որտե՞ղ է մահացել Տերյանը. /2/

1920թ Օրենբուրգ

16*. 3-4 նախադասությամբ վերլուծի՛ր Տերյանի «Կարուսել» բանաստեղծությունը. /5/

[illegible]

17*. Ի՞նչ խնդիրներ էր **արծարծում** Տերյանը «Հայ գրականության գալիք օրը» հոդվածում. /5/

[illegible]

ում.

[illegible]

43

Հավելված 6.

| փորձ. դաս. | գիտ. համ. | ճանաչ. կարող. | ստեղծ. կարող. | գնահա տողակ. | արժեք. համ. |
|---|---|---|---|---|---|
| բարձր | 7 | 10 | 9 | 9 | 9 |
| միջին | 6 | 3 | 2 | 2 | 2 |
| ցածր | 0 | 0 | 2 | 2 | 2 |
| | | | | | |

Հավելված 7

Դասապլան

Ուսուցիչ Կարմեն Ահարոնյան

| Առարկա՝ | Հայոց գրականություն | Ամսաթիվ 29. 01 2018 | | Կիսամյակ2 | | Դասարան 11հ1 | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Խմբի բացվածք՝ | Աղջիկ: 12 Տղա: 1 OS - ՈՒՀԿ: | | | | | | |
| Թեմա՝ | Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման խորհրդապաշտության համակարգում | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, սահիկաշար, բնագիր, նկարներ | | | | | | |
| Ամբողջական պատկեր՝ | Աշակերտները արդեն անցել են Լևոն Շանթի կյանքը, ստեղծագործությունը, «Հին աստվածներ» դրամայի սյուժեն | | | | | | |
| Դասի նպատակը՝ | -Զարգացնել աշակերտների<br>- քննադատական մտածողությունը, գնահատողական կարողություններն ու հմտությունները<br>- կարծիքներ արտահայտելու և հիմնավորելու կարողությունը | | | | | | |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ | | | | | | |

| | |
|---|---|
| Վերջնարդյունքները | Կկարողանան.<br>- Ինքնուրույն գնահատողական դատողություններ անել:<br>- Քննադատաբար վերլուծել դրաման<br>- Կարծիքներ արտահայտել և հիմնավորել, ընդունել տարակարծությունը |

| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները | Նպատակներին հասնելու ռազմավարությունը |
|---|---|
| Դասը անցկացնել ՔՄ ռազմավարությամբ: Ուշադրություն դարձնել, թե որքանով հաջողվեց ճիշտ կիրառել տեխնոլոգիան ու մեթոդները: Ի՞նչ արդյունքներ կարող եմ արձանագրել ՔՄ զարգացման միջոցով: Զսպել ինքնուրույն կարծիքներ արտահայտելու ժամանակ ավելորդ հուզականությունը: Աշխատել, որ վերջին խոսքը լինի աշակերտներինը:<br>Օգտագործել ՌԻՆԳ-ի ռազմավարություններից | Երեխաներին նախապես հայտնել եմ իմ նպատակները, ուսումնասիրել գրականություն, ընտրել ՔՄ զարգացման մեթոդներ, նախապատրաստել եմ օժանդակ նյութեր, սահիկներ, տեքստեր:<br>Աշակերտներին տալ առաջ մղող առաջադրանքներ գնահատել բազային վիճակը և առաջ անցնել: Հետադարձ կապ՝ պարզելու կարողացա՞նք արդյունավետ կիրառել այս մեթոդը, և այն նպաստե՞ց ուսումնառությանը: |

| Գործողություններ (ժամ/տևողություն)<br>45 րոպե | Ուսումնական գործունեություն<br>Աշակերտներ | Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ<br>Ուսուցիչ | Առանցքային հարցեր<br>Հիմնական ստուգումներ<br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
|---|---|---|---|
| Մուտք՝ հաշվառում-2ր<br>Դասի սկիզբ. 10 ր<br>1.Դասարանին հայտնել, | | Գրանցում եմ ամսաթիվը, նշանակում բացականերին | |

| | | | |
|---|---|---|---|
| որ այսօր մենք ուսումնասիրելու ենք Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման խորհրդապաշտության համակարգում<br>Մինչ տեքստը բաժանելը պետք է մի փոքր խորհենք խորհրդապաշտության մասին մեր իմացած գիտելիքների շուրջ:<br>Աշխատանք զույգերով. 3-5 րոպեի ընթացքում գրի առնել, թե ինչ գիտենք խորհրդապաշտության մասին մասին՝ ճիշտ կամ սխալ: ԽԻԿ-ի խթանման փուլ | Զույգերով քննարկում են, գրառում, կազմում ցուցակ | Շրջում եմ դասարանում, հետևում աշխատանքին | |
| Ներկայացնել գրածը 5ր.<br>ՌԻՆԳ-ի շրջափուլի առաջին կետը՝ Ու՞ր եմ գնում | Աշակերտները կարդում են իրենց գրառումները: | Գրառում եմ գրատախտակին, ի հայտ եմ բերում անհամաձայնությունները, տալիս ուղղորդող հարցեր: Քաջալերում եմ բոլորին, ակտիվացնում: | Ներգրավել բոլորին, վերհիշել բազային գիտելիքը, կապել նորի հետ, որի վրա պիտի կառուցվի այսօրվա դասը:<br>Ո՞ր հարցի ժամանակ էին ամենաշատ տարաձայնությունները:<br>Որտեղի՞ց է գալիս թյուրըմբռնումը: |
| 2. ԽԻԿ-ի իմաստի ընկալման փուլ 10ր<br>Երկու զույգեր միանում են և կազմում 4 հոգանոց խմբեր: Բաժանում եմ թերթիկները. դրամայից երեք տարբեր հատված ա.Կարդալ հատվածը՝ դուրս գրել խորհրդապաշտական կերպարները, հատվածները<br>բ. կազմել քառաբաժան | Աշակերտները աշխատում են խմբով, կատարում նշումները, լրացնում քառաբաժանը: | Շրջում եմ դասարանում, հետևում աշխատանքին, ուղղորդում, պատասխանում աշակերտների հարցերին: | Հետևել, որ ներգրավված լինեն բոլորը: |

| | | | |
|---|---|---|---|
| ադյուսակ: | | | |
| Ավարտելուց հետո զույգերով քննարկել, թե կարդացածը որքանով համապատասխանեց մեր իմացածին ու գրառածին: | Յուրաքանչյուր զույգից մեկը ներկայացնում է, թե ինչն էր իր պատկերացրածից ճիշտ, ինչը՝ սխալ: | Լսում եմ,  ուղղորդում, ուշադրություն հրավիրում առաջին փուլում գրատախտակին գրված անհամաձայնություններին, ճշտում, ամրապնդում: | Ամփոփիչ հարցեր՝ կապված ամենաշատ հանդիպած անհամաձայնությունն երի հետ: |
| ՌԻՆԳ-ի երկրորդ շրջափուլ. Որտե՞ղ եմ հիմա: | Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր քառաբաժանը, մեկնաբանում: Մյուս խմբերից կարող են հարցեր ուղղել, պարզաբանել անհասկանալի հարցերը: | Լսում եմ, ուղղորդում, պարզաբանող հարցեր տալիս, | Ձևավորող գնահատական տալ խմբի աշխատանքին, խրախուսել առանձին պատասխաններ, ինքնուրույն և քննադատական գովեստի արժանացնել մտածողություն պարունակող մտքերը: |
| 3.ԽԻԿ-ի երրորդ փուլ 15ր<br>Կշռադատում, գնահատում | Հարցերի միջոցով աշակերտներն ամփոփում են, թե ինչ գիտեին և ինչ իմացան:<br>Մտածում են բոլորը, պատասխանում են լեզվի կապիչով ընտրվածները: | Լսում եմ, ուղղորդում, կատարում շտկումներ: | Օգտագործել ձևավորող գնահատականի և ինքնագնահատականի ուժը: |
| 4.Կապ՝ իմացածի և նոր սովորած գիտելիքի միջև՝ ադամանդաձև գծապատկերով: 3ր | Աշակերտները գրառում են ելքի տոմսերը | | Բացահայտել սխալները, պատճառաբանել, համեմատել, հակադրել, համադրել, մաքրել ցեխերը,,՝ հաջորդ հարցադրումը |

| | | | |
|---|---|---|---|
| 5.Ելքի տոմսեր.2ր<br><br>6. Տնային աշխատանքի հանձնարարում.1ր<br><br>Գրել փոքրիկ շարադրանք.<br><br>«Կուսակրոնություն... ժամանակակի՞ց է» | Աշակերտները գրում են ելքի տոմսերը | Հավաքում եմ, անցնում հաջորդ փուլին: | անսխալ կատարելու նպատակով:<br><br>- |

| | |
|---|---|
| Տերմիններ<br><br>Գրագիտություն<br><br>Թվագիտություն | Դրամա, սյուժե, կերպար, խորհրդապաշտություն<br><br>Ճիշտ գրել հատուկ անունները՝ անձնանուններ, տեղանուններ |
| Աջակցություն | Սահիկները պատրաստելուն և ցույց տալուն օգնելու է դասարանի աշակերտուհի Մերինն |
| Գնահատում | Ձևավորող գնահատական, ինքնագնահատական հետադարձ կապ: |
| Տնային աշխատանք | Գրել շարադրություն «Կուսակրոնություն...ժամանակակի՞ց է»<br><br>վերնագրով՝ կիրառելով գնահատողական, քննադատական մոտեցում: |
| Դասին անդրադարձ | Դասը անցավ ակտիվ, աշակերտների ներգրավվածությամբ: Մտագրոհի գրավոր փուլը այս անգամ անսովոր չէր:<br><br>Ես աշխատեցի ինձ վրա՝ ավելի շատ լսելու աշակերտների կարծիքը, ավելի քիչ խոսելու և վերջին խոսքը աշակերտներին թողնելու:<br><br>Քառաբաժանը ներկայացվեց լավ: Աշակերտները ճիշտ էին ընկալել Լ. Շանթի խորհրդապաշտության համակարգը: Երեք խմբերն էլ «Իջեք, իջեք երազներ» հատվածը և մեկնաբանեցին յուրովի: Հետաքրքիր էր մեկնաբանությունները ունայնության փոսի մասին:<br><br>Քառաբաժանի մեջ բարձր մակարդակ ապահովեց երկրորդ խումբը. նրանք Շանթի |

| | |
|---|---|
| | դրաման համեմատեցին Իսահակյանի աշխարհաթողության գաղափարի հետ: Երրորդ խումբը, ունենալով լավ նկարիչ, ավելի շատ ժամանակ էր տրամադրել նկարելուն՝ ծով, նավ, փոս, Առաջին խմբի արտահայտած ինքնատիպ միտքն այն էր, որ կուսակրոնությունից հրաժարվելը չպիտի համարվի մեղք: Բուռն քննարկում ծավալվեց այս հարցի շուրջ: Բախվեցին կարծիքները, բայց աշակերտները կարողացան բանավեճը տանել առանց իրար վիրավորելու: Խորհրդաշատությունը համեմատեցին երազների հետ, ինչը ավելի պատկերավոր դարձրեց քննարկումը: Աշակերտների մեծ մասը ստացան ձևավորող բարձր գնահատականներ:<br><br>Ես այսուհետև հաճախ կաշխատեմ բանավիճային իրավիճակներ առաջադրել, որովհետև աշակերտները սկսել են ավելի հանդուրժող լինել այլակածության հարցում: Առաջադրանքները կատարվեց հաճույքով և ակտիվությամբ, ինչն էլ նպաստեց դրական վերջնարդյունքին: Գոհացուցիչ էին նաև երեխաների անդրադարձը դասին, որոնք նրանք գրեցին ելքի տոմսերի վրա: |

Հավելված 8
Դասապլան

Ուսուցիչ Աիարոնյան Կարմեն.

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Առարկա՝ | Հայ գրականություն | Ամսաթիվ<br>20.10. 2017 | | Կիսամյակ<br>1-ին | | Դասարան<br>11h.1 | |
| Խմբի բացվածք՝ | Աղջիկ: 12 Տղա: 1 OS ՈՒՀԿ:2 | | | | | | |
| Թեմա՝ | Ե. Չարենցի «Տաղարան» շարքը | | | | | | |
| Օգտագործվող նյութեր՝ | Դասագիրք, գրականության տետր, համակարգիչ, սահիկաշար, Ե. չարենցի լուսանկարը, բնագիրը, կավիճ, գրատախտակ: | | | | | | |
| Ամբողջական պատկեր՝ | Աշակերտներն արդեն անցել են Չարենցի կյանքը, ստեղծագործությունները, բանաստեղծությունները, պոեմները: Նախորդող ենթաթեման եղել է «Ծիածան» շարքը: Այս դասին հարցադրումների մեթոդով քննելու են «Տաղարան» շարքի գաղափարական բովանդակությունը, մեկնաբանելու են Չարենցի հայացքները, ժամանակի հետ նրա կապը, հայերնասիրական, սիրային, համամարդկային գաղափարները: | | | | | | |
| Դասի նպատակը՝ | Հարցադրումների մեթոդով՝<br>-զարգացնել ՔՄ, գնահատողական կարողությունը<br>-զարգացնել հարցեր կազմելու, ճիշտ պատասխանելու հմտությունները, հարցերի շուրջ առողջ քննարկումներ կատարելու կարողությունը | | | | | | |
| | Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ | | | | | | |

| Վերջնարդյունքները | Աշակերտները կկարողանան<br><br>- պատասխանել վերլուծական, գնահատողական հարցերին՝ հանդես բերելով ինքնուրույնություն<br><br>- սովորել հարցեր կազմել և ճիշտ ու տրամաբանական պատասխաններ տալ տրված հարցերին:<br><br>- քննարկել, բանավիճել, առարկել, համեմատել, հակադրել, վերացարկել |
|---|---|

| Ուսուցչի զարգացման ընթացիկ նպատակները | Նպատակներին հասնելու ռազմավարությունը |
|---|---|
| Աշակերտները անպայման կարդան գրական ստեղծագործությունները, ինչը խիստ կարևորում եմ: Հասկանան Չարենցին որպես իր ժամանակ մեծագույն պոետ, հարցադրումներ կատարեն թեմայի շուրջ: Կարևոր է, որ ես հասնեմ լուրջ թեմաների շուրջ ինքնուրույն հարցեր կազմելու, հարցերը տարբերակելու, ճիշտ պատասխանելու հմտության, ինչպես նաև խմբում ճիշտ աշխատելու կարողության: | Օգտագործել ՔՄ տեխնոլոգիաները, մեթոդները, ՌԻՆԳ-ի ռազմավարությունները՝ ցանկալի արդյունքի հասնելու համար: |

| Գործողություններ (ժամ/տևողություն) | Ուսումնական գործունեություն<br><br>Աշակերտներ | Պլանավորած տարբերակում և ՈւԳ ռազմավարություններ<br><br>Ուսուցիչ | Առանցքային հարցեր<br><br>Հիմնական ստուգումներ<br><br>(հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին) |
| --- | --- | --- | --- |
| Մեկնարկ մտագրոհով.<br><br>Ինչի՞ մասին է «Տաղարանը» 5 | Աշակերտները ասում են առաջին մտքին եկածը, ուշադիր լսում են միմյանց՝ չկրկնելու արդեն ասվածը:<br><br>Ամփոփում են՝ համաձա՞յն են բոլոր ձևակերպումների հետ, անհամաձայնության դեպքում բացատրել: | Գրատախտակին գրում եմ այն բոլոր բառերն ու բառակապակցությունները, որոնք կասեն աշակերտները՝ աշխատելով գրի առնել բոլորի ասածը:<br><br>Լսում եմ, ուղղում, խրախուսում ճիշտ պատասխանը: | Առաջին փուլի հարցերը՝ ինչի՞ մասին է «Տաղարանը»: Նպատակը՝ համոզվել՝ կարդացե՞լ են և հասկացե՞լ են, ներգրավել թեմայի մեջ: |

| | | | |
|---|---|---|---|
| Ընթացք<br>1-ին փուլ 10ր<br>Դասարանը բաժանել 3 խմբի՝ խմբերը կոչելով «Ծիածան» շարքի երեք գույներով՝ կապույտ, ոսկեգույն, մանուշակագույն: | Աշակերտները կազմում են խմբեր: | | |
| Կազմել մեկ բաց և մեկ փակ հարց և տալ կողքի խմբին: | Աշխատում են խմբով, գրում հարցերը, փոխանցում կողքի խմբին: | Հետևում կարգապահությանը: | Ուսուցիչը պարզում է աշակերտների կազմած հարցերի խորությունը, ճշտությունը, դրանց պատասխանելու, տրամաբանելու, խոսքը հիմնավորելու հմտությունները, բանավիճելու կարողությունները: |
| Նշանակել լեզվի ոստիկան, որպեսզի հետևի լեզվական սխալներին, վրիպումներին: | | | |
| Հարցերին պատասխան.10 ր | Պատասխանում են, հիմնավորում պատասխանը, առարկում, համաձայնվում, հակառակվում: | Համաձայնվում եմ, ժպտում, առարկում, ուղղումներ անում, լրացուցիչ տեղեկություններ հաղորդում: | Յուրաքանչյուր խմբի տված մեկ լավագույն հարցը գրում ենք գրատախտակին, գրում տետրերում: |

| | | | |
|---|---|---|---|
| Ամփոփելով այս փուլը՝ տալ միավորներ գումարելով լեզվի ոստիկանի միավորի: 2ր | Միավորները գրում են գրատախտակին | Հետևում եմ, ուղղում, եթե կարիքը կա: | |
| Անցում հաջորդ փուլին. թերթիկների վրա տալիս եմ երեք հարց և մտածելու ժամանակ. 10րոպե 1-խմբի հարցեր.<br>1.Ո՞րն է Չարենցի դերը հայ գրականության մեջ:<br>2.Ինչ գիտեք Չարենց-Տերյան զուգահեռի մասին<br>3.«Ծիածան» շարքը ի՞նչ ուղղություն ունի. հիմնավորի՛ր:<br>2խումբ.<br>1.Ո՞րն էր «Տաղարանը» գրվելու | Մտածում են բոլորը, պատասխանում են խմբի ընտրությամբ:<br>Եթե հարցեր են առաջանում, խմբերը ուղղում են միմյանց և պատասխանում: | Ուշադիր լսում եմ, հետևում, որ լսեն, չընդհատեն, վերջում հայտնեն իրենց կարծիքը: | Աշակերտներին տրվում են բաց և փակ, պարզ և բարդ տրամաբանական և դատողական բնույթի հարցեր: Հարցերը տալու ժամանակ հանձնարարում եմ մտածել՝ ինչպիսին է հարցի տեսակը: |

| | | | |
|---|---|---|---|
| շարժառիթը<br>2.Ինչի՞ մասին է «Էլի զարուն կգա» բանաստեղծությունը 3.Ինչու՞ գրվեց Թիֆլիսի բարբառով:<br>3խումբ<br>1.Բանաստեղծի չհասկացվածության ձեր մեկնաբանությունը:<br>2. Ի՞նչ գիտեք Արփենիկ Չարենցի մասին<br>3.Սայաթ-Նովայի և Չարենցի գոզալների նմանությունները:<br>Պատասխանների ներկայացում 10 | Խմբերը պատասխանում են հարցերին: Աշակերտները ուշադիր լսում են միմյանց պատասխանները, համաձայնվում են, առարկություններ կամ հաշվարկի սխալ լինելու դեպքում միջամտում | Ամփոփում եմ այս փուլը՝ միավորները գումարելով նախորդ փուլի միավորներին՝ դարձյալ հաշվելով լեզվի ոստիկանի միավորը: 5ր<br>Ուղղում եմ, լրացումներ կատարում:<br>Գրվում են ստացած միավորները: Ուսուցիչը պարզաբանում է, թե ինչու այսքան միավոր ստացան, որն էր խմբի թերությունը, որտե՞ղ փայլեցին, ինչի՞ց երևաց, որ գիտեն, բայց ուշադիր չեն: Ամփոփում եմ, միավորները, գումարում ընդհանուր արդյունքները, լեզվի ոստիկանի միավորը և հայտնում ամեն խմբի միավորը: | Կարևորում եմ խմբի ներսում իրար լսելու, լրացնելու, բաց թողածը շարունակելու կարողությունը:<br>Աշակերտները ճիշտ պատկերացնեն, թե ինչի՞ համար ստացան բարձր կամ ցածր միավոր: Իմանան հարցադրումներով դասի ժամանակ իրենց մասնակցությունն ու դերը, ճիշտ հարցեր կազմելու |

| | | | |
|---|---|---|---|
| Դասի ավարտ 1ր<br><br>Տարբերակված տնային աշխատանք.<br>Յուրաքանչյուր խմբին տրվում է առանձին տնային հանձնարարություն՝ քառաբաժան աղյուսակ կազմել «Տաղարանի» երեք բանաստեղծությունների վերաբերյալ:<br>1.«Երբ ես էս հին աշխարհը»,2.«Հայաստանին», | Լրացնում են ելքի տոմսերը | Հավաքում եմ | տրամաբանությունը:<br><br>Աշակերտները հասկացե՞լ են պահանջները, կարողանու՞մ են վերացարկել, կարծիքներ հայտնել, մտքեր փոխանակել, լսել իրար, հակառակվել և համաձայնվել: |

| | | | |
|---|---|---|---|
| 3.«Ես իմ անուշ Հայաստանի»:<br><br>Գրել երեք բաց հարց: | | | |
| | | | |

| | |
|---|---|
| Տերմիններ<br><br><br><br><br><br><br>Գրագիտություն<br><br><br><br><br><br>Թվագիտություն | Ժողովածու, արձակ-չափածո, Հավլաբար, Թիֆլիս, ֆուտուրիզմ, քնարական հերոս<br><br>Սովորել ուղղագրություն. Թիֆլիս-Թբիլիսի, Տեղանունների, անձնանունների ուղղագրությունը, ժող. լեզվի և գրական լեզվի տարբերությունը, Թիֆլիսի բարբառի առանձնահատկությունները:<br><br>Սովորում են 19-րդ 20-րդ դարերի տարբերակումը, ժամանակաշրջանը, ժողովածուն գրելու թվականը, դրա գրությունը թվերով և տառերով: |
| Աջակցություն | Գրատախտակի վրա գրելիս և սահիկաշարը ցուցադրելիս կօգնի Անին: |
| Գնահատում | Քանի որ դասը հարցադրման մեթոդով է և խմբային աշխատանք, կգնահատվեն խմբերը, կխրախուսվեն ակտիվ մասնակցած աշակերտները: |
| Տնային աշխատանք | Տարբերակված տնային աշխատանք: Յուրաքանչյուր խմբին տրվում է առանձին տնային հանձնարարություն՝ քառաբաժան աղյուսակ կազմել «Տաղարանի» երեք բանաստեղծությունների վերաբերյալ:<br><br>1.«Երբ էս հին աշխարհը»,2.«Հայաստանին», 3.«Ես իմ անուշ Հայաստանի»:<br><br>Գրել երեք բաց հարց: |

| | |
|---|---|
| Դասին անդրադարձ | Հարցադրումների միջոցով Չարենցի «Տաղարանը» անցնելը նպաստեց երեխաների ՔՄ: Իմ առջև դրված նպատակները ես կարողացա իրականացնել: Աշակերտները կարողացան իրենց կազմած և իմ տված հարցերի միջոցով վեր հանել ժողովածուի գաղափարները, բանաստեղծի կերպարը: Գրատախտակին գրված հարցերից հետքրքիր էին հետևյալ հարցերը. 1.Ինչու՞ չհասկացան Չարենցին: 2. Ո՞րն է կնամոլության և կնամեծարության տարբերությունը: 3. Չարենցը կանխազգու՞մ էր իր ճակատագիրը: 4. Չարենց-Արփենիկ զուգահեռը: Աշակերտները կարողացան թեման կապել պատմության և գրականության այլ<br><br>ճակատագրի նմանությունը Չարենցին: Կարողանում էին հիմնավորել սեփական կարծիքը, արդիականացնել, զուգահեռներ անցկացնել մեր օրերի հետ: Դասի միջոցով աշակերտները կարծիքներ փոխանակեցին տիրող վարչակարգի և հանճարների փոխհարաբերության մասին: Դասը համարում եմ հաջողված, վերջնարդյունքները գոհացուցիչ են, հատկապես խմբով աշխատելու տեսակետից:<br><br>դեպքում լսելու վրա աշխատանք միշտ էլ կա: Դասի թերի կողմերից մեկն էլ այն էր, որ բոլորը չէին կարդացել «Տաղարանը»: Բանավոր խոսքում թույլ էին տրվում սխալներ, որոնք չնկատեց լեզվի ոստիկանը: Պետք է շարունակել ամենօրյա աշխատանք՝ այս տարածված թերությունները շտկելու ուղղությամբ:<br>դասերի հետ: Հիշեցին Աբովյանին, Սայաթ-նովային, Ակսել Բակունցին ու նրանց |
| | Դասի չհաջողված կողմը մի խմբի մյուսին չլսելն էր ու միջամտելը: Այսօր այնքան հագեցած էր դասը, որ ես իմ խոսքը կարողացա հասցնել մինիմումի: Ամեն |



16. Ո՞ր շարքն է միջնադարյան մեծ տաղերգուի երգերի ձևի ու բովանդակության ներդաշնակությամբ ստեղծված. /1/

<<Հայաստան>>

17. Ո՞րն է Չարենցի արձակ գործը, որը Կարսում կատարված դեպքերն է նկարագրում. /1/

<<Երկիր Նաիրի>>

18*. Շարադրի՛ր քո անձնական վերաբերմունքը Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծության նկատմամբ /3-4 նախադասությամբ/. /5/

19*. Ո՞րն էր ֆուտուրիստական գրականության գաղափարախոսությունը. /2/

20*. Դու քեզ համարո՞ւմ ես *Յարդագողի ճամփորդ*, ինչո՞ւ. /3/

ՀԱՎԵԼՎԱԾ 8Բ

[illegible]

16. Ո՞ր շարքն է միջնադարյան մեծ տաղերգուի երգերի ձևի ու բովանդակության ներդաշնակությամբ ստեղծված. /1/

«Տաղարան»

17. Ո՞րն է Չարենցի արձակ գործը, որը Կարսում կատարված դեպքերն է նկարագրում. /1/

«Երկիր Նաիրի»

18*. Շարադրի՛ր քո անձնական վերաբերմունքը Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծության նկատմամբ /3-4 նախադասությամբ/. /5/

[illegible]

19*. Ո՞րն էր ֆուտուրիստական գրականության գաղափարախոսությունը. /2/

[illegible]

20*. Դու քեզ համարո՞ւմ ես *Չարդագողի ճամփորդ*, ինչո՞ւ. /3/

[illegible]

ՀԱՎԵԼՎԱԾ 9

| փորձ. դաս. | գիտ. համ. | ճանաչ. կարող. | ստեղծ. կարող. | գնահա տողակ. | արժեք. համ. |
|---|---|---|---|---|---|
| բարձր | 8 | 11 | 10 | 10 | 12 |
| միջին | 7 | 4 | 1 | 3 | 1 |
| ցածր | 0 | 0 | 1 | 1 | 0 |
| | | | | | |

Հավելված 10

Գիտափորձի արդյունքների վերլուծության գծապատկեր

